

ՌՌՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ Է

հարցազրույց ՌԴ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Սմբատյանի հետ



դրա հետ կապված իրավական խնդիրները, որոնք անպայման կծագեն:

- Դա չափազանց կարևոր հարց է: Մեզ հուզող այդ հարցը վերաբերում է ամբողջ աշխարհի հայերին և շատ բարդ է այն իմաստով, որ մեզ մոտ՝ հենց մեր հանրապետությունում, ավելի քիչ հայ է ապրում, քան ողջ աշխարհում միասին վերցրած: Միջազգայնագետ իրավաբանները պետք է ձևեր գտնեն, որից հետո կկնքվեն երկկողմ համաձայնագրեր: Դա սկզբունքորեն բավականին հեշտ լուծվող հարց է Ռուսաստանում, քանի որ Ռուսաստանի օրենսդրությունը չի արգելում երկքաղաքացիությունը:

- Մեր հայրենակիցներից քանի՞սն ունեն երկքաղաքացիություն:

- Ռուսաստանում բնակվող հայերի 20%-ը հայաստանցի հայեր են, նրանց 70%-ն ունի երկու անձնագիր, և դա փաստ է:

- Իսկ որտե՞ղ պիտի ծառայեն երկու անձնագիր ունեցող պատանիները:

- Բանակի հարցն ամենաբարդն է: Բանակում ծառայելը Հայաստանի քաղաքացիների պարտականությունն է: Մարդիկ Ռուսաստան են տեղափոխվում հիմնականում ընտանեկան պատճառներով, կան նաև այնպիսիները, որոնք խուսափում են ծառայությունից: Այս տարի մենք Ռուսաստանի տարբեր շրջաններից բավականին շատ պատանիների կարողացանք ուղարկել Հայաստան՝ բանակում ծառայելու և նորից հետ վերադառնալու Ռուսաստան: Մարդիկ սկսում են գիտակցել, որ պետք է անցնեն այդ ամենի միջով, որ չեն կարող ամբողջ կյանքում ապրել անօրինական ձևով: Շատերն են դա հասկացել, մենք էլ մեր կողմից ամեն ինչ անում ենք նրանց օգնելու համար: Մենք հանդիպումներ ենք անցկացնում, բացատրական աշխատանքներ ենք տանում, որ եթե նույնիսկ նրանք հետախուզման մեջ են, ապա Հայաստան գնալու դեպքում մեղադրանքը հանվում է նրանց վրայից, և նրանք հանգիստ գնում են բանակ: Նրանք շատ զոհ են դրանից: Ուզում են նշել նաև, որ շատ լավ երիտասարդներ ունենք, որոնք սովորում են այստեղ առաջնակարգ բուհերում՝ Մոսկվայի միջազգային հարաբերությունների ինստիտուտում, Պատրիս Լուծումբայի անվան ինստիտուտում, բայց նրանք քվտայով չեն ընդունվել և ենթակա են բանակ զորակոչվելու: Նրանց համար մենք հիմա խնդրում ենք Հայաստանի գիշումների գնալ և տարկետում տալ, քանի որ այդ երիտասարդները Հայաստանի ապագան են:

- Ինչպե՞ս կարելի է բնութագրել Ռուսաստանի հայ համայնքը:

- Սիյուռք բառը մենք վերջերս են սկսել օգտագործել: Նախկինում մենք պարզապես մի երկրի քաղաքացիներ էինք, 15 տարի է, ինչ մենք դարձել ենք համայնք, նոր-նոր է սկսում աշխատել համայնքային մտածողության մեխանիզմը: Մարդիկ հասկանում են, որ ներքին ինքնապահպանման համար ընտանիք ունեցող հային անհրաժեշտ է, որ իր երեխան չմոռանա մայրենի լեզուն, կապված լինի հայ մշակույթի, Հայաստանի հետ: Բոլոր տեղերում, որտեղ շատ հայեր կան, հարուստ մարդիկ կան, ովքեր ֆինանսավորում են եկեղեցու, հայկական կիրակնօրյա դպրոցների կառուցումը, հայ ուսուցիչներ են հրավիրում իրենց երեխաների համար: Ահա այսպես կամաց-կամաց ստեղծվում է հա-

- Այսօրվա դրությամբ քանի՞ հայ է ապրում Ռուսաստանում:

- Մոտ 2,5 մլն.: Դրանցից միայն 20%-ն են հայաստանցի հայեր, մնացածները այստեղ են ծնվել, կամ տեղափոխվել են Աբխազիայից, Վրաստանից, Ղազախստանից, Ուզբեկստանից: Չավախքից շատ հայեր կան, շատ են նաև փախստականները՝ ավելի քան 300.000:

- Իսկ Մոսկվայում:

- Մեր դեսպանատան ու իմ հաշվարկներով՝ մոտ 350.000 հայեր կան միայն Մոսկվայում:

- Պրն. դեսպան, ինչպես գիտեք, Հայաստանն այլևս թույլ է տալիս երկքաղաքացիությունը: Ինչպե՞ս են լուծվելու

23 Արվեստը որոնումների մեծ ընթացք է

Նրա գունային անցումների մեջ ջղաձգումներ չկան: Ճիչ չկա, կարծեք բողոք չկա, բայց նրա նկարներում ներքին լիրիկա կա: Ես հիացած եմ, որ մեր քաղաքում կա այնպիսի համեստ նկարիչ, որ գլուխը կախ իր գործն է անում... ճա կա իր նկարների մեջ»:

Սա էլ Մելս Սանթրյանի կարծիքն է:

Անհայտ մի մուլդակից զանգերի զորնգուն հնչյունների ձայն էս լսում՝ անաղարտ, մաքրամաքուր, որտեղ ամեն ինչ

զեղեցիկ է, ու նույնքան անկեղծ: Սա Համլետի աշխարհն է՝ բանաստեղծորեն շաղախուն գունային վիճակների արտահայտություններով:

Այստեղ ամեն մի գույն իմաստավորում ունի: Հոգևոր տարածության անսահմանության մեջ է, որ մարդու ստեղծագործությունն, իրապես, ազատ է, և բացվում են դռները, սահմանները վերանում են, ու ստեղծագործումը թևակոխում է նոր փուլ:

Համլետ Չատինյանի գունային միջա-

վայրը այնքան տպավորիչ է, որ յուրաքանչյուր անգամ մտածում ես, որ արվեստագետի ստեղծագործ, արարիչ միտքն ու ձեռքը երբեք կանգ չի առնում: Կյանքը, առավելապես լավ արվեստը, որոնումների մեծ ընթացք է:

Արսեն ՈՍՖԱՅԵԼՅԱՆ

ՀՀ նկարիչների միության անդամ
ՎՊՍՊ- արվեստի ամբիոնի վերալսողների բաժնի
դասախոս

3

մայնքը: Բոլոր տեղերում էլ, որ համայնքը ղեկավար ունի, բայց կարող են ասել, որ 70-80%-ը արդեն կազմավորված համայնքներ են: Վերջին տարիներին մենք ակտիվորեն շփվում ենք գրեթե բոլորի հետ, լավ հարաբերությունների մեջ ենք, տարին մի անգամ հավաքում ենք բոլորին: Շրջաններ կան, որտեղ հայերը շատ ակտիվ են, օրինակ Պերմի, Ռոստովի, Սամարայի հայերը: Մեր մեծագույն հաջողություններից մեկն այն է, որ այսօր Ռուսաստանում կա Ռուսաստանի հայերի միություն: Այս կազմակերպությունը կարողացել է իր մասնաճյուղերը ստեղծել գրեթե բոլոր շրջաններում, շատ ակտիվ աշխատում են բոլոր շրջանների հայերի հետ, նաև Մոսկվայում մեզ շատ են օգնում: Շատ հարցեր մենք լուծում ենք հենց այդպիսի կազմակերպությունների միջոցով:

- Ռուսաստանում շատ կան հարուստ հայեր, ինչպե՞ս են նրանք իրենց զգում այստեղ, կապեր ունե՞ն Զայաստանի հետ:

- Նրանց հաջողությունը պայմանավորված է նաև այն բանով, որ Զայաստանն ու Ռուսաստանը շատ լավ հարաբերությունների մեջ են տարբեր առումներով, այդ թվում և անվտանգության: Բայց, միևնույն է, նրանք այստեղ հյուր են: Դեսպանատունը հասավ նրան, որ այսօր հարուստները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում Զայաստանի նկատմամբ: Ամեն դեպքում, բոլոր հայերը, ովքեր այստեղ հասել են ինչ որ բանի, կապիտալ ունեն, արդեն իրենց բիզնեսն ունեն նաև Զայաստանում: Մեկը խանութներ է կառուցում, մյուսը՝ բնակելի շինություններ, մեկը հյուրանոց կամ փոքր գործարաններ ունի: Նրանք ասում են, որ թող փոքր լինի բիզնեսը, բայց մենք հանգիստ ենք, որ այն ունեք Զայաստանում: Գիտենք, որ ոչ մի բիզնեսմեն հենց այնպես գումար չի ներդնի: Թեկուզ անցան, բայց եկամուտ պետք է ունենա: Նրանք մտել են շուկա և հիմա գնալով ավելի շատ են ներդրումներ անում: Դրան գումարած և այն, որ նրանք ներգրավում են նաև իրենց ռուսաստանցի գործընկերներին:

- Ի՞նչ խնդիրներ ունեն Ռուսաստանում ապրող հայերը:

- Դրանք հիմնականում կապված են փաստաթղթերի հետ, հիմա տասնյակ հազարավոր հայեր ապրում և աշխատում են հին խորհրդային միության անձնագրերով: Այժմ դա ընդամենը թղթի կտոր է, և ոչ Զայաստանում, ոչ այստեղ օրենքի ուժ չունի: Դրանք հիմնականում շրջաններում ապրող մարդիկ են և դուրս չեն գալիս, աշխատում են այնտեղ, երեխաները դպրոց են գնում, ոչ-ոք նրանցից անձնագիր չի հարցնում, այն փաստորեն, նրանց պետք չի գալիս: Մենք մամուլի, հյուպատոսների, համայնքների միջոցով փորձում ենք բացատրել նրանց, որ հենց որ ցանկանան որևէ տեղ մեկնել, անմիջապես կհայտնվեն օրենքից դուրս, և նրանց ուղղակի կարտաքսեն երկրից: Մի խնդիր էլ կա. նոր օրենքով անձնագիրը փոխելն արժե 100-120\$, և երեխաներն անպայման պետք է անձնագիր ունենան: Շատերը դրա հնարավորությունը չունեն, մենք մեր կողմից փորձում ենք օգնել բազմազավակ ընտանիքներին, թոշակառուներին, բայց դա հարցի լուծում չէ: Խնդիրն այն է նաև, որ Ռուսաստանը հսկայական երկիր է, և այսօր Յակուտիայից, Վլադիվաստոկից Մոսկվա գալը թանկ հաճույք է, մենք չենք հասցնում մեր հյուպատոսական ծառայությունների միջոցով լուծել բոլոր հարցերը: Իսկ մենք ունենք ընդամենը երկու գլխավոր հյուպատոսություն՝ Մոսկվայում և Պետերբուրգում: Բացի այդ, մեր քաղաքացիներից շատե-

րի անձնագրերի հինգ տարով դրված կնիքի ժամկետը լրացել է: Այդ անձնագրերն արդեն անվավեր են, մարդիկ դրանով պարզապես չեն կարողանա որևէ տեղ մեկնել: Շուտով մեր հյուպատոսը աշխատակիցների հետ կմեկնի տարբեր շրջաններ տեղում ամեն ինչ կարգավորելու համար: Այժմ նախատեսված է մեկնել Եկատերինբուրգ, հետո Օրենբուրգ և այլն: Հյուպատոսական ծառայությունների ու համայնքների միջոցով մենք արդեն տեղեկացնում ենք մարդկանց, որ նման խնդիրներով դիմեն հյուպատոսին:

- Ինչպիսի՞ն է վերաբերմունքը հայերի նկատմամբ:

- Այստեղ հայերին լավ են վերաբերվում, պետք է վերցնել առանձին դեպքեր, թե հայերն այս են արել, այն են արել: Նման դեպքեր լինում են բոլոր ազգերի մեջ, այդ հարցն ամբողջ Ռուսաստանի համար է խնդիր: Իսկ հիմնականում հայերին լավ են վերաբերվում, պետությունները բարեկամ են, ժողովուրդները՝ նույնպես: Հպարտությամբ կարող են ասել, որ դեսպանատունն ամեն ինչ անում է հայերի հեղինակությունը բարձրացնելու ուղղությամբ:

- Թվում է, թե Զայաստանը Ռուսաստանի ռազմավարական գործընկերն է, սակայն ՀՀ քաղաքացիներին, ի տարբերություն, ասենք Ուկրաինայի քաղաքացիների, առանց զրանցում կարելի է գտնվել Ռուսաստանում ընդամենը երեք օր: Այս հարցն ինչ-որ կերպ լուծվու՞մ է:

- Դա մեզ համար, իհարկե, շատ անհարմար է: Մենք ակտիվ աշխատում ենք այդ ուղղությամբ: Դեռ անցյալ տարի մենք այդ մասին խոսել ենք Գրիգորյի, Միրոնովի հետ: Դա իրավական հարց է, դրա լուծումը ընթացքի մեջ է: Ես նույնիսկ օրինակ են բերել ռուսական կողմին, եթե ասենք, եկել ես ուրբաթ երեկոյան, իսկ երկուշաբթի հերթերի պատճառով չես հասցրել ձևակերպել զրանցումը, ուրեմն երկուշաբթի երեկոյան դու դառնում ես անօրինական մարդ: Այդպես չպետք է լինի:

- Ի՞նչ կտա Ռուսաստանում Զայաստանի տարին:

- Մեզ թվում է, թե մեզ լավ են ճանաչում, թե յուրաքանչյուր ռուս պետք է իմանա ով է հայը: Բայց դա այդպես չէ, մենք պետք է աշխատենք այդ ուղղությամբ: Մենք հպարտանալու շատ բան ունենք: Զայաստանի տարվա միջոցառումները շփվելու հնարավորություն են տալիս, ուր գործարարները, տնտեսագետները, քաղաքական գործիչները, կրթության և արվեստի մարդիկ նոր ուղիներ կարող են գտնել, նոր ներդրումներ, և այդ ժամանակ երկիրը կսկսի զարգանալ: Կարծում են՝ այս տարին շատ օգտակար կլինի երկու երկրների համար, մենք կարող ենք աջակցել մեր կոլեկտիվներին, մեր երիտասարդներին, որ նրանք կարողանան գնալ այլ երկրներ, ցույց տալ իրենց, ներկայանալ: Թող զգան, թե ովքեր են իրենք, միայն երևանում նստելով հնարավոր չէ հասկանալ, թե ինչի են իրականում նրանք ընդունակ: Թող մի համերգը վատը լինի, մյուսը՝ լավը, թող քննադատեն, դա լավ է, թող տարբեր կարծիքներ լինեն, հենց դա է զարգացումը:

- Իսկ գլխավոր համերգից հայ արվեստագետներից ու՞մ կատարումն է ամենաշատը դուր եկել Վ.Պուտինին:

- Նա շատ էր հավանել «Արցախ» պարի ամսամբլը, Բարսեղ Թումանյանի կատարումը, նույնիսկ ասաց. «Ես վաղուց չէի լսել այսպիսի յուրօրինակ ձայն»: Հաճույքով լսեց նաև Ջիվան Գասպարյանին, Պուտինը նրան վարուց է ծանախում:

Հարցազրույցը՝ Արթուր ԹՈՐՈՍՅԱՆԻ

ՆՈՐ ՇԱՀՈՒԹԱԲԵՐ ԲԻԶՆԵՍ

Երկու դեպքում էլ չես տուժում Տուժում են, թե՞ շահում այն քաղաքացիները, ովքեր զարտուղի ճանապարհներով պատսպարվում են Եվրոպայի փախստականների համար ստեղծված ճամբարներում: Ըստ միգրացիայի և փախստականների վարչության պետ ԳԱԳԻԿ ԵԳԱՆՅԱՆԻ, նրանք շահում են, թեպետ նման հաջողությունը թվացյալ է: Գ. Եգանյանը գտնում է, որ միգրացիայի նկատմամբ մեր երկրում խիստ զգայական վերաբերմունք ունեն, մինչդեռ դա շատ բնական երևույթ է և մարդ արարածին հատուկ է եղել նրա գոյության հենց սկզբից՝ փնտրել բնակության համար առավել հարմար պայմաններ: «Բազմաթիվ երկրներ ժամանակ առ ժամանակ հանդիսացել են արտագաղթի, իսկ որոշակի ժամանակահատվածում էլ դարձել ներգաղթի երկրներ: Այն, իհարկե, բացասական երևույթ է և վկայում է երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին, սակայն, հատկապես աշխատանքային միգրացիայի շնորհիվ նաև հնարավոր եղավ ապահովել բազմաազգային ընտանիքների գոյությունը: Բացի

այդ, ակտիվացան մշակութային-տնտեսական շփումները, ինչն, իհարկե, դրական ազդեցություն ունեցավ երկրի ընդհանուր զարգացման վրա», - կարծում է Գ. Եգանյանը: Հայտնի է, որ յուրաքանչյուր երկիր ունի սեփական միգրացիոն օրենսդրությունը: Այս առումով հատկապես խիստ են Սկանդինավյան երկրները, որտեղ նույնիսկ ամուսնությունը տեղացու հետ կարող է լավագույն դեպքում ապահովել կացության կարգավիճակ, բայց ոչ քաղաքացիություն: «Նրանց մտահոգում է այն, որ անլեզու միգրանտը կարող է վտանգավոր լինել հասարակության համար: Ցավոք, դա փաստ է, իմ անձնական շփումներն էլ ցույց են տվել, որ անլեզու բնակվողները սովորաբար վատ վարք են դրսևորում: Եվ այդ պատկերն ընդհանուր է բոլոր երկրների համար: Որպեսզի բախտախնդիր էմիգրանտների թիվը նվազի, պետք է վերացնել դրդապատճառները: Իսկ

ԽԱՐՈՒՄԻԿ ՈՒ ԻՐԱԿԱՆ ԴՐԱԽՏԻ ՄՈԼՈՐՅԱԼՆԵՐԸ

Հայաստանը կամաց-կամաց դառնում է կլանող գործոն

Ամենատարբեր դրդապատճառներով Հայաստանից մեկնած քաղաքացիների մեծամասնությունն օտար երկրներում իր ներկայությունն օրինականությանը մոտեցնելու համար դիմում է այդ երկրների կառավարություններին փախստականի կարգավիճակ ստանալու համար: Հայաստանի միգրացիոն գործակալությունը համագործակցում է եվրոպական երկրների էմիգրացիոն իշխանությունների հետ: Վերջերս նրանցից ստացվել է բավական հետաքրքրական հետազոտություն հայ քաղաքացիների փախստականի կարգավիճակ ստանալու համար հորինած լեգենդների մասին: Ամօրինական կարգավիճակն օրինականով փոխարինելու միակ միջոցը շատերի համար մնում է հալածյալի, քաղաքական, կրոնական համոզմունքների պատճառով ճնշումների ենթարկվածի լուսապասկը: Լեգենդների տեսակներն մի քանի բաղադրամաս ունի: Առաջին տեղում խառն ամուսնությունների լեգենդն է: Այս դեպքում, որպես կանոն, ներկայացվում է հայ ամուսնու և արդրեջանցի կնոջ ողբերգությունը: Եվ քանի որ կինն արդրեջանցի է, Հայաստանում մեղում են նրանց: Հաջորդ լեգենդն մեջ ներկայանում են հալածվող երկրների կանանց, երրորդ խմբում իրենց սեռական փոքրամասնության ներկայացուցիչներ ներկայացնողները: Լեգենդների մի հատվածում էլ Հայաստանի իշխանությունների կողմից հավանական ու անհավանական բռնությունների ենթարկվող անձինք են: Ընդ որում, հստակորեն նշվում են կուսակցությունների, քաղաքական գործիչների, իշխանավորների անուններ, որոնք այդ սցենարներում այս կամ այն դերակատարումն ունեն, դրական կամ մոռյալ, մայած ֆաբուլայի: Շատ-շատերը կապշեին, իմանալով, թե հայրենիքից հեռացած մարդկանց ճակատագրում ինչ-պիսի վճռորոշ դերակատարում են ունեցել: Ընդ որում, հավաստիություն հաղորդելու համար օգտագործվում են հայաստանյան մամուլում ներկայացվող իրադարձությունները: Հստակ ժամանակագրությամբ ու կարգով քաղվում է այն, ինչ կարող է հույժ ծառայել երևակայական իրադարձությունների համար:

Եվրոպական էմիգրացիոն կազմակերպություններն արդեն սովորել են այս պատմություններին, այնպես որ հայ արտագաղթողներից շատ քչերին է հաջողվում փախստականի կարգավիճակ ստանալ: Ընդ որում, կարգավիճակի բննարկման ընթացակարգը տևում է բավական երկար՝ 0,5-1 տարի: Մերժում ստանալուց հետո էլ դիմողը կարող է վիճարկել որոշումը, դա էլ տևում է ևս 1 տարի: Այսինքն, ընդհանուր առմամբ 2-3 տարի: Այդ ողջ ժամանակում Հայաստանի քաղաքացին մնում է այդ երկրում և էթե կարողանում է ինչ-որ բան էլ ուղարկել Հայաստան, հայրենակիցներին թվում է, թե իրենց ծանոթ-բարեկամի վիճակը վատ չէ: Սա սովորական պատմություն է, խաբուսիկ դրամաի պատրանք: Դրումն հայտնվածը չի ուզում պատմել կտոր ընկնելու մասին, ներսինն էլ չի պատկերացնում նրա վիճակը:

Ներգաղթի երկրների աշխարհագրության մեջ չափազանց ուշագրավ մանրամասներ կան: Տարբեր ժամանակներում այդ երկրների տեսականին խիստ խայտաբղետ է: Արտագաղթողներն սկսել են Բենիլյուքսի (Բելգիա, Նիդերլանդներ, Լյուքսեմբուրգ) երկրներից և այդպես շարունակել մինչև 2000 թվականը: Այնուհետև՝ Գերմանիա, Ավստրիա և անցած ու այս տարի՝ Ֆրանսիա: Հիշատակված վերջին երկրներ դիմողների քանակը 3-4 անգամ աճել է: Ըստ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության պետի պաշտոնակատար Գագիկ Եգանյանի, երկրների տեսականու որոշակի ու հստակ փոխակերպումները խոսում են այն մասին, որ երևույթը կառավարվում է հանցագործ խմբավորումների կողմից: Սրանք իրենց ներկայացուցիչներն ունեն որևէ երկրի և՛ ներսում, և՛ դրսում և հարմար պահերին մարդկանց ուղղորդում են դեպի այդ երկիրը: Որոշիչ հանգամանքն այդ երկրում կարգավիճակ ստանալու առավել հավանական հնարավորություններն ու միջոցներն են: Այսինքն, էթե տեսնում են, որ ինչ-որ երկիր բավանցելու հեշտ ուղիներ կան, անմիջապես իրենց խողովակներով տարածում են տեղեկատվությունը: Եվրոպական երկրների տնտեսական մակարդակների միջև խոր տարբերություններ չկան, այնպես որ ժամանակ առ ժամանակ որևէ երկրի նկատմամբ հետաքրքրության արթնացումը պայմանավորված է հիմնականում այս գործոնով:

Միգրացիայի շնորհիվ կազմակերպված հանցագործ տարրերը հսկայական գումարներ են աշխատում: Եվ աշխարհի մակարդակով միգրացիոն շահութաբերությունը համեմատվում է միայն գենքի առևտրի և նավթի արտահանման եկամուտների հետ:

Աշխարհի 43 զարգացած երկրների կառավարություններին

փախստականի կարգավիճակ ստանալու համար դիմած հայերի թիվը 2000-2001 թվականներին հասել է 9 հազարի: Անցած տարի, սակայն, այդ թիվը խիստ նվազել է՝ իջնելով մինչև 6 հազարի: Դա բացատրվում է նաև նրանով, որ եվրոպական երկրների միգրացիոն ծառայություններն ավելի են հստակեցրել խնդիրը իրենց համար և կարգավիճակ շնորհելիս առաջվա առատածեռությունը չեն դրսևորում: Մշտապես կայուն է փախստականի կարգավիճակ ստանալու համար ԱՄՆ կառավարությանը դիմած հայ քաղաքացիների թիվը՝ տարեկան 300-400 մարդ:

Միգրացիոն գործակալության տվյալներով, 2002 թվականից հանրապետության ելքի ու արտահոսքի պատկերում կտրուկ փոփոխություններ են եղել: Մինչև 2002 թվականն արձանագրվում էր կայուն բացասական սալոդ, մեկնողների թիվը միշտ գերազանցում էր ժամանողների տարեկան 40-60 հազար անձով: 2002-ից հետո այդ բացասական սալոդն կրճատվել և գրեթե զրոյացվել է: 2004 թվականին առաջին անգամ արձանագրվել է դրական սալոդ՝ մարդիկ ավելի շատ եկել են Հայաստան (118 մարդ), քան մեկնել: Իսկ անցած տարի այդ թիվը 5 անգամ աճել է: Ժամանողների թիվը մեկնողներին գերազանցել է 12 հազար 500-ով: Եվ այս թվերն արձանագրվել են ուղևորահոսքերի ընդհանուր ծավալների աճի պարագայում: Այդ թվերի միջոցով դժվար է տարբերել, թե ինչ նպատակներով են մարդիկ գալիս կամ գնում:

Ընդհանուր առմամբ, էթե ուղևորահոսքերի թիվն աճում է, նշանակում է, որ Հայաստանի նկատմամբ հետաքրքրության մակարդակը մեծանում է: Մարդկանց վերադարձի վրա մի քանի գործոն կարող են ազդած լինել: Բնականաբար, առաջինը Հայաստանում վիճակի փոփոխությունն է: 10 տարի առաջ և հիմա երևանը նույնը չէ: Դեռևս պահպանելով ասիական քաղաքի ախտերը, երևանն այնուամենայնիվ փորձում է եվրոպական քաղաքի հագուստ հագնել՝ շքեղ գվարձավայրերով, առանձնատներով, սպասարկման կետերով: Իհարկե, Հայաստանի հանկարծակի հարուստներն այդ ամենն իրականացնում են գիշատչի նման՝ ճանապարհին ոչնչացնելով երևանի հին կերպարի բոլոր խորհրդանիշները, կանաչագեղձերով քաղաքը, բայց խաբուսիկ հարմարավետության ու շքեղության պատրանք կա: Եվ դա է սկսել ձգել դուրի հայերին ու գրասալոդիկներին: Մյուս կողմից, 10-15 տարի առաջ արտերկիր գաղթած մեր հայրենակիցներից շատերի գործերն իսկապես լավ են ընթացել, և կլորիկ գումար գրպաններում, շատերը փորձում են Հայաստանում վերահաստատվել: Այն պարզ ճշմարտությամբ, որ օտար միջավայրը հազվադեպ է հոգեհարազատ դառնում, էթե չես ծնվել ու մեծացել այնտեղ: Մյուս կողմից, աշխարհի արսալի դարձած ահաբեկչությունն ու անօրինական միգրանտների հետ մշտական խնդիրները շատ երկրների մղում են խստացնել միգրացիոն օրենսդրությունը: Եվ հայ պանդուխտների համար հավելյալ պարզելներ են առաջանում: Այս հանգամանքը շատերին ստիպում է հայացքը շրջել դեպի Հայաստան: Հանրապետությունում տների աննախադեպ և օր-օրի թանկացումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ հատկապես Ռուսաստան գաղթած հայերը զանգվածաբար սկսել են սեփականություն գնել Հայաստանում:

Իհարկե, ուղևորահոսքերի ծավալների մեծացումը որոշակի չափով խոսում է նաև նյութական ապահովվածության մակարդակի մասին: Մարդիկ պարզապես նման ուղևորությունների հնարավորություն ունեն:

Սովորաբար երկրից արտամղող լծակները երկրում առկա անմխթար իրողություններն են սոցիալական, քաղաքական, տրնտեսական պատերազմներ, էկոլոգիական աղետներ և այլն: Եվ էթե մի տեղ կա արտամղողը, մի այլ տեղ առաջանում են կլանող, ձգող գործոնները՝ բարձր կենսամակարդակ, կայունություն և այլն: Այս գործոնների քաշից կախված միգրացիոն հոսքերի վեկտորներն ուղղվում են կամ երկրից դուրս, կամ դեպի երկիր: Ըստ Գագիկ Եգանյանի, մինչև 2000 թվականը Հայաստանում գերակշռել են արտամղող գործոնները, որովհետև ամեն տարի բացասական սալոդն եղել է 40-60 հազար:

Էթե դրական սալոդն մի քանի տարի (մի տարին քիչ է կլանող գործոնների առաջացման մասին խոսելու համար) պահպանվի, մենք կարող ենք ասել, որ արդեն երևան են գալիս ձգող գործոններ:

Իհարկե, այս բոլորից գատ չպետք է անտեսել նաև հայրենիք վերադարձի անհատական հոգեբանական դրդապատճառները: Երբ մարդն այդպես էլ չի կարողանում հարմարվել օտար կենսամակարդակին ու սովորություններին, չի բուժվում համազգային հիվանդություն դարձած կարտոցից և պանդուխտի ցուպը նետելով հայրենիք է վերադառնում:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԱՍԵՐ ՉԵՆՔ ՔԱՂԵԼ

Հայաստանի եվրահետերազման համատեքստում վերջերս շատ է խոսվում հայի մենթալիտետի առանձնահատկությունների մասին: Հայերս եվրոպացի՞ ենք, եթե ոչ, պատրաստ ենք կամ ուզո՞ւմ ենք եվրոպացի դառնալ: Ստորև՝ հոգեբան ԱԼԲԵՐՏ ՆԱԼԶԱՋՅԱԼԻ տեսակետները այս և մի շարք այլ հարցերի վերաբերյալ:

- Ես այդ խնդիրը ուսումնասիրել եմ և եկել հետևյալ համոզման. լիբերալ-դեմոկրատիայի գաղափարախոսությունը, որը այսօր տարածված է եվրոպայում, մասամբ՝ Միացյալ Նահանգներում և Կանադայում, չի կարող կիրառելի լինել Հայաստանում: Մեր պայմաններին ավելի հարիր է կառավարման միջանկյալ՝ ավտորիտար դեմոկրատիայի մոդելը: Մարդու նկատմամբ հարգալից վերաբերմունքը, քաղաքացիների հիմնարար իրավունքների և ազատությունների լիարժեք պաշտպանությունը, արժանավայել ապրելու, աշխատելու երաշխիքներ, ժողովրդավարություն, արդար ընտրություններ... Այդ ամենը, իհարկե, անհրաժեշտ է, բայց դրան դեռ պետք է հասնել: Ավելին՝ դրան պետք է պատրաստ լինել: Մինչդեռ, ինչքան էլ սիրում ենք հպարտանալ մեր մշակույթով և պատմական ավանդույթներով, հիմնականում գավառական հասարակություն ենք:

- Ինչո՞ւ եք այդպես կարծում:
- Մեզանում օրենքները չեն գործում: Դրանք ձևախեղվում են: Ոչ թե օրենքը, գաղափարն է գերիշխում, այլ մարդկային ամենօրյա հարաբերությունները, ազգակցական, ընկերական, հայրենակցական կապերը: Սա գավառականության, սուբյեկտիվիզմի, մեղ մտածողության դրսևորում է, որ հսկայական վնաս է պատճառում մեր հասարակությանը: Հայաստանում նույնիսկ դեմոկրատիա ասածը ճիշտ չի ընկալվում: Դեմոկրատիա՝ առաջին հերթին նշանակում է հարգանք ուրիշի նկատմամբ, մարդու վիճակի մեջ մտնելու ընդունակություն: Մենք, եթե ասում ենք՝ պաշտոնատար անձ, հասկանում ենք, որ նա պետք է կոպիտ, մեծամիտ լինի և իր ենթակայի հետ խոսի հրամայական տոնով: Եթե այդպես չէ՝ դու նրա հետ «դուք»-ով ես խոսում և վերաբերվում ինչպես հավասարը՝ հավասարին, մարդուն օգնում ես, առաջ քաշում, մարդանեջ դուրս բերում, հակառակ բանն է դուրս գալիս: Մտածում են՝ ուրեմն թույլ մարդ է, քեզանից վախեցել է, և շատ արագ մեծամտանում են: Համեստությունը, նրբակատությունը չի գնահատվում, եթե չասենք ավելին: Սա նշանակում է, որ ժողովրդի մեծամասնության մտածողությունը դեմոկրատական չէ:

- Մինչդեռ կարծիք կա, թե մեր ժողովուրդը ժողովրդավարության և օրենքի գերակայության կարող է, բայց ահա իշխանություն ունեցողները, չարամտորեն խախտելով օրենքները, հասարակությանը փչացնում են:

- Այն, որ «վերևներում» օրենքները չեն հարգվում, և ժողովուրդն իր հերթին է փորձում շրջանցել դրանք, իհարկե, այստեղ ճշմարտություն կա: Ինչո՞ւ: Որովհետև մեր ժողովուրդը, եթե սեփական պետություն է ունեցել, կառավարվել է ավտորիտար մեթոդներով: Եթե ոչ գտնվել է ուրիշների գերիշխանության ներքո, այսինքն՝ դարձյալ ավտորիտար կառավարման օբյեկտ է հանդիսացել: Ըստ այդմ՝ սովորել է ընդօրինակել իրենից բարձր կանգնածների՝ պաշտոնյաների գործելակերպը: Բայց սա հարցի միայն մի կողմն է: Գավառականության գործոնը ես արդեն ասացի. օրենքները ընդունվում են, բայց քանի որ դրանք ոմանց «հարմար» չեն, այսինքն՝ որոշակի սահմանափակումներ և պարտադրանքներ են ենթադրում, մարդիկ փնտրում են զարտուղի ճանապարհներ, կաշառք են տալիս, կաշառք են վերցնում, հազար ու մի սողանքներ գտնում՝ շրջանցելու օրենքը: Կամ՝ բարեկամին լավություն են անում, որ վաղը-մյուս օրը նա էլ իրենց լավությունն անի: Սա մարդկային հարաբերությունների որոշակի ստերեոտիպ է, որ երկար տարիներ օտարների ենթակայության տակ գտնված ազգերին օգնել է՝ գոյատևելու պատմության քառուղիներում, և այնքան է ամրապնդվել ազգային գիտակցության մեջ, որ վերարտադրվում է նույնիսկ անկախ Հայաստանի պայմաններում: Դա թուլացնում է պետությունը, որովհետև օրենքները պետք է կիրառվեն, անկախ նրանից՝ մեր սրտով են, թե՛ ոչ: Իսկ եթե մենք գտնում ենք, որ օրենքը ճիշտ չէ և ժողովրդի, հասարակության շահերից չի բխում, ոչ թե պետք է այն շրջանցելու ճանապարհներ փնտրենք, այլ քաղաքացիա-

կան ակտիվություն հանդես բերենք, հանդես գանք առաջարկություններով, դիմենք ԱԺ-ին, կարճ ասած՝ օրինական ճանապարհով փորձենք բարեփոխել այդ օրենքները: Խախտելով օրենքը՝ հետամուտ լինելով սեփական նպատակներին, սա պետական մտածողության բացակայության դրսևորում է:

- Համաձայն եք պապից ավելի կաթոլիկ արևմտամտների տեսակետին, թե քանի որ ազգային մտածողությունը խոչընդոտում է Հայաստանի եվրոպական ինտեգրացմանը, պետք է հրաժարվել դրանից, այսինքն՝ ազգային մտածողությունից:

- Բացարձակապես համաձայն չեմ: Ազգային մտածողությունը սեփական ինքնությանը հավատարիմ մնալու, ազգապահպանության շատ հզոր գործոն է: Հակառակը՝ մենք պետք է կարողանանք առողջ ազգայնականության գաղափարը ամրապնդել մեր հասարակության մեջ, բայց դա չի արվում: Ավելին՝ ով ասես ներխուժում է՝ իր գաղափարներով, կասկածելի նպատակներով ու ապագային ծրագրերով, և այս առումով մեր հասարակությունը իսկապես խոցելի է: Մեր էթնիկական ինքնապաշտպանությունը խիստ թուլացած է, և եթե պետությունը իր անտարբեր-հայեցողական վերաբերմունքը չփոխի, մեզ ոտքի տակ կտան կտորրեմ, չենք էլ հասցնի ուշքի գալ: Բարեբախտաբար այս ազգային մտածողությունը որոշ մարդկանց մոտ դեռ պահպանվում է:

- Հայաստանյան որոշ շրջանակներ «ազգայնականություն» բառը լսելիս ջղաձգվում են և գայրույթով դեմքը կհմռտում: Իսկ հայերի և ադրբեջանցիների էթնիկ անհամատեղելիության մասին խոսակցություններից ընդհանրապես «ֆաշիզմի» հոտ են առնում:

- Դա տգիտություն է՝ էթնոհոգեբանության, էթնոլոգիայի, ընդհանրապես, սոցիալական գիտությունների և պատմության լիակատար չիմացության դրսևորում: Ինչպե՞ս կարելի է չտեսնել ակնհայտ իրողությունը: Հայերը և ադրբեջանցիները ոչ միայն տարբեր գաղափարախոսություններ, կրոնական և էթնիկական ավանդույթներ ունեն, այլև տարիներ շարունակ կողք կողքի, կարելի է ասել՝ իրար հետ, նույն հասարակության մեջ ապրելով, համատեղելի չեն դարձել: Եվ երբ միջնորդները հայտարարում են, թե ադրբեջանցիները պետք է վերադառնան իրենց նախկին բնակության վայրերը և ապրեն դարաբաղցիների հետ, ես հանցավոր միտում եմ տեսնում: Ֆրանսիայում և Գերմանիայում տեղի ունեցած վերջին միջադեպերը՝ մահմեդականների և տեղացիների միջև տեղի ունեցած ընդհարումները պետք է որ սթափեցնեին եվրոպացիներին: Ավելին՝ կարող է հարց առաջանալ. տասնյակ հազարավոր ադրբեջանցիներին ուզում եք վերադարձնել Ղարաբաղ, որ նորից՞ կտորտածներ լինեն, դուք էլ միջամտելու հնարավորություն ունենաք: Մենք հին պատմություն ունենք, խաբեբաներից շատ ենք տուժել, բայց պատմությունից այդպես էլ դասեր չենք քաղել: Գոնե հիմա պետք է խելքի գանք: Ինչպե՞ս, եթե Չարենցի տողերը վկայակոչելով՝ շարունակ կոտորակվում ենք, ժողովրդին բաժանում յուրայինների և օտարների: Այսօր Հայաստանում ավելի քան 7 տասնյակ կուսակցություն և չորս հազար հասարակական կազմակերպություն կա, և դրանց թիվը գնալով աճում է: Չեր կարծիքով, սա նորմա՞լ է: Ավելացրեք կրոնական աղանդների պառակտիչ գործունեությունը և շարունակվող արտագաղթը: Այս առումով՝ իրավիճակը իսկապես մտահոգիչ է: Խնդիրը, ըստ էության, դարձյալ հանգում է էթնոհոգեբանության խնդիրներին և ազգային բնավորության առանձնահատկություններին: Հոգեբանության մեջ կա այսպիսի դասակարգում՝ անհատապաշտներ և կոլեկտիվիստներ: Կոլեկտիվիստներ՝ ոչ թե բոլշևիկյան, այլ հանրային նվիրված լինելու, ընդհանուրի շահը մասնավորին ստորադասելու իմաստով: Պարզապես՝ ազգերի մեջ էլ էական տարբերություններ կան՝ անհատապաշտ, ինդիվիդուալիստ ազգեր և կոլեկտիվիստներ: Մենք՝ հայերս, ընդգծված ինդիվիդուալիստներ ենք, այստեղից՝ կուսակցություններ ստեղծելու, սեփական հասարակական կազմակերպությունը հիմնելու, լիդերության նկրտումները: Այս տեսանկյունից Արևմուտքը Հայաստանում լավ պլացդարմ ունի, որովհետև արևմտյան ժամանակակից հասարակություններն էլ անհատապաշտական են: Չճայած՝ մենք ունենք նաև այլ հատկանիշներ, որ ինչ-որ տեղ կարծես հակակշռում են այդ գործոնը: Եվ սա ողջունելի է, որովհետև ծայրահեղ անհատապաշտությունը վտանգավոր է, մասնավոր մեր վիճակում գտնվող ժողո-

վրդրի համար, որը լուրջ արտաքին և ներքին սպառնալիքների դիմագրավելու խնդիր ունի: Հիսուսելով այն մասին, որ նման կազմակերպությունների հետևում որպես կանոն այլ ուժեր են կանգնած լինում, որովհետև այդ գործերը առանց ֆինանսավորման չեն արվում: Ես կասեի՝ սա ազգային անվտանգության խնդիր է. մի՞թե կարելի է հանդուրժել, որ այդքան աղանդներ, հակաազգային գաղափարներ պրոպագանդող տարրեր ազատորեն գան և հակահայկական քարոզչությամբ զբաղվեն:

- Ինչպե՞ս բացատրել, որ մեզանում խիստ քննադատաբար են վերաբերվում սեփական իշխանություններին, փոխարենը բարեհաճ են օտար ղեկավարների նկատմամբ:

- Այդ երևույթը իսկապես գոյություն ունի: Դա ազգային ղեկավարների, ընդհանրապես՝ ազգի արժանավոր ներկայացուցիչների նկատմամբ ընդհանուր բացասական, եթե չասենք՝ նսեմացնող վերաբերմունքի մասնավոր դրսևորումներից մեկն է: Սա երկարատև պատմություն ունեցող բարդույթ է, որ մասամբ պայմանավորված է նույն անհատապաշտության դրսևորումներով: Յուրաքանչյուրը իրեն լիդեր է երևակայում, չիմանալով, թե ինչ հսկայական ճնշման տակ են գտնվում այն մարդիկ, ովքեր որոշումներ են ընդունում, և այդ ճնշումներին դիմակայելը ինչքան դժվար է, կողքից նայելով, կարծում են՝ հեշտ է, և իրենք ավելի լավ կղեկավարեն: Ինչպես կասեր աշուղ Ջիվանին, որին ես փիլիսոփա-մտածող եմ համարում, պարծենկոտ մուկը ուզում է լեռը շուռ տալ, կողը դեմ է արել՝ խելքի աշեցեք: Սա իսկապես աննորմալ իրավիճակ է: Վերջին հաշվով, կյանքի հիմնական նպատակը պաշտոն գրավելը չէ: Կարելի է շատ բովանդակալից կյանքով ապրել առանց բարձր պաշտոն ունենալու: Ավելին՝ պաշտոնը ծանր լուծ է, իսկ օտարի առաջ խոնարհվելը՝ ուղղակի վնասարարություն:

- Հայրենի ընդդիմությունը տարիներ շարունակ հեղափո-

խական զորաշարժերի մեջ է, բայց արդյունքի չի հասնում: Ինչո՞ւ գունավոր կամ անգույն հեղափոխությունների սցենարները մեզանում չեն գործում: Պատճառը հայկական մենթալիտետն է, ընդդիմությունն է անկազմակերպ, թե՞ «բռնապետական» իշխանությունն է ուժեղ:

- Նախ՝ հայերը, իսկապես հեղափոխական ժողովուրդ չեն: Ծայրահեղ անհատապաշտ մարդիկ ընդհանրապես հեղափոխական չեն լինում: Մյուս կողմից՝ հեղափոխականը պետք է նվիրված լինի իր գաղափարներին և մոռանա իր անձը: Ես չգիտեմ մեր քաղաքական գործիչների մեջ քանիսը կարող են բարձր կանգնել իրենց սուբյեկտիվ նպատակներից և նվիրվել ազգային գաղափարներին: Գուցե կան փոքրաթիվ մարդիկ, բայց դրա հետ մեկտեղ անհրաժեշտ են ընդգծված լիդերական հատկություններ: Իսկ մեր ընդդիմության մեջ լիդերները շատ են, բայց դրանք փոքր չափի առաջնորդներ են, գործում են առանձին-առանձին և անկազմակերպ: Քաղաքական խաղեր խաղալ միշտ էլ կարելի է, բայց հեղափոխություն անելու համար անվիճելի առաջնորդ է պետք, որը կկարողանա մրցակցել իշխանության հետ: Իսկ այդպիսի լիդեր ես ընդդիմության մեջ չեմ տեսնում: Ընդդիմությունը նույնիսկ միասնական լիդերի հարցը չի կարողանում լուծել. յուրաքանչյուրը մտածում է իսկ ինչո՞ւ նա, ոչ թե ես, ես նրանից ինչո՞վ եմ պակաս: Անգամ չեն էլ թաքցնում, որ ակնկալում են արտաքին ուժերի՝ ամերիկյան, Եվրոպական հիմնադրամների օջակցությունը իշխանության հարցը տնօրինելու համար: Բայց ազգային պետության մեջ ո՞վ է տեսել, որ դրածո իշխանությունը հաջողություն ունենա: Հայերը համբերատար են, բայց ինչքան էլ օտարասեր ու օտարամոլ երևան, ի վերջո, գլխին կտան կիեռացնեն: Մեզ պետք են ազգային գործիչներ: Գործիչներ, որոնք կարող են դիմանալ արտաքին ճնշումներին և լուծել պետության առջև կանգնած հարցերը. դրսից «կաշառք» ստանալով՝ հեռու չեն գնա:

Լիլիթ ՊՈՂՈՍՅԱԼ

ԳԵՐՄԱՆԱՑԻՆ ՀՀ ՕՐՀՆԵՐԳ Է ԳՐՈՒՄ

Գերմանացի դիրիժոր, կոմպոզիտոր Պիեր-Դոմինիկ Պոնելը ուրիշ ազգի օրհներգ գրելու մեջ արտառոց ոչինչ չի տեսնում:

Մարտի 3-ին Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը ղեկավարելուց հետո, նա վերադարձել էր հայրենիք: Իսկ ընդամենը մեկ շաբաթ անց՝ դարձյալ ժամանել էր երկրին: Հետաքրքրվեցինք՝ այս անգամ որն է արվեստագետի այցի նպատակը: «Մարտի սկզբին, երբ երևանում էի, լսեցի, որ Հայաստանը պատրաստվում է իր օրհներգը փոխել», - տեղեկացրեց երաժիշտը, որը մտադիր է մասնակցել այս գործընթացին: Ունենալով մտերիմներ երևանում (սկսած 1987-ից՝ սա երաժշտի 8-րդ այցն է Հայաստան), մինչ օրս նա չի կարողացել իր համար ճշտել նոր օրհներգի հետ կապված մանրամասներ: Հարցին՝ որքանով է ճիշտ, որ օտարերկրացին դառնա այլ պետության օրհներգի հեղինակը, և արդյո՞ք ինքը այդքան լավ գիտի հայկական մշակույթը, մեր գրուցակիցը հայտնեց, որ դեռ 40 տարի առաջ, երբ ինքը ընդամենը 8 տարեկան էր, հայրը՝ օպերային դիրիժոր ժան-Պիեր Պոնելը որդուն պատմել է «մի երկրի մասին, որի անունն է Հայաստան և խորհուրդ տվել անպայման տեսնել իմ մշակույթ ունեցող այդ երկիրը»: Արվեստագետը հայտնեց նաև, որ ինքը շատ վաղուց ուսումնասիրում է հայոց պատմությունը, հայկական երաժշտություն՝ Կոմիտասից մինչև Խաչատրյան ու Տերտերյան, նաև հայ ժամանակակից կոմպոզիտորական արվեստ: «Վերջին այցիս ժամանակ աշխարհահռչակ Միմասի որդու ուղեկցությամբ եղա նկարչի ծննդավայ-

րում՝ Ջաջուռում: Ուզում եմ ասել, թող մեծամտություն չթվա, ես անգիր գիտեմ և՛ հայ պատմություն, և՛ հայ մշակույթ», - նշեց արվեստագետը:

Նա տեղեկացրեց նաև, որ իր մայրն էլ՝ դերասանուհի Մարգիտ Սաադին ժամանակին տարված էր «հայկական ամեն ինչով»: «Սերս հայ անվանի արվեստագետների ու հայ մշակույթի նկատմամբ եղել է շատ վաղուց և ոչինչ արտառոց չկա, որ օտարերկրացին դառնա Հայաստանի նոր օրհներգի հեղինակը», - ասաց գերմանացի արվեստագետը:

Հարցին՝ արդեն կա՞ օրհներգի երաժշտությունը և ո՞վ է տեքստի հեղինակը, Պ. Պոնելը պատասխանեց. «Երաժշտությունը ամբողջությամբ գլխումս է: Օրերս, երբ վերադառնամ Գերմանիա, այն կնոտագրեմ, հետո արդեն՝ հաջորդ այցիս, հայաստանցի մտերիմներիս խորհրդով, կներկայացնեմ որևէ բանաստեղծի»:

Հետաքրքրվեցինք երաժշտի ծնողների ծագումով, հասկանալու թե ի՞նչն է հայերի ու հայ մշակույթի հանդեպ մեզ վերաբերմունքի պատճառը: «Հայրս կիսով չափ ֆրանսիացի, կիսով՝ հունգարացի է, մայրս՝ արաբի ու գերմանացու խառնուրդ: Ես էլ չգիտեմ, թե որ ազգն է իմ մեջ շատ խոսում: Բայց մի բան հաստատ գիտեմ՝ բոլոր ժողովուրդներն էլ երկիր մոլորակի քաղաքացիներ են և, անկախ ազգային պատկանելությունից, կարող են տարվել բոլորովին այլ ժողովրդի մշակույթով: Մի բան ևս հաս-

տատ գիտեմ. ծնողներս ու ես ընդունել, սիրել ու մինչ օրս ուսումնասիրում ենք հայ մշակույթը», - հայտնեց Պիեր-Դոմինիկ Պոնելը:

ՀՀ նոր օրհներգի հետ կապված պարզաբանումներ ստանալու նպատակով դիմեցինք մշակույթի նախարարության հասարակայնության հետ կապերի գծով պատասխանատու Գայանե Դուրգարյանին: «Կառավարության 2006թ. գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին որոշման մեջ մշակույթի նախարարությանը հանձնարարական է տրվել՝ պատրաստել օրենքի նախագիծ ՀՀ պետական գիմանշանի, դրոշի և օրհներգի մասին: Առաջին երկու խորհրդանիշերի մասով օրենքի նախագիծը պատրաստ է և դրված է շրջանառության մեջ: Ինչ վերաբերում է օրհներգին, գործընթացն այսպիսին է. մշակույթի նախարարությունը բոլոր շահագրգիռ կազմակերպություններին (պետական, կառավարական, հասարակական) պատրաստվում է ներկայացնել գործող օրհներգը, որպեսզի վերջիններս խնդրի վերաբերյալ հաստատեն իրենց տեսակետը: Մշակույթի նախարարությունը հանրագումարի բերելով դրանք, կպատրաստի օրենքի նախագիծ և կներկայացնի կառավարությանը», - հայտնեց տիկին Դուրգարյանը:

Ս. ՂԱՆԻԵԼՅԱՆ

ՄԵՆՔ ՄԵԶԱՆԻՑ ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆՔ



Հայերեն տառերը քարերի կտորների վրա շաղ են եկել գետնին: Տապանաքարի փշուրներ են: Իրարից քիչ հեռու՝ հսկա տապանաքարերի երկու կույտ: Չէ, այս տեսարանը ազատագրված Քելթաքարում չէ, և ոչ էլ՝ Նախիջևանում: Սա Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում է, 2006 թ. ապրիլին: Այգեգործների փողոցում է այս շինհրապարակը, Նորքի գանգվածից Նոր Նորք տանող ճանփեզրին:

«Տեսնես ո՞վ է սրա տերը», - հարցնում է որդիս: Նրան տարել էի հետս, որ տեսնի,

թե ինչպես ենք հայերս վարվում մեր մշակութային արժեքների հետ: «Ի՞նչ կարևոր է, թե ով է տերը», պատասխանում են: Տապանաքարերն այստեղ են բերել ինչ-որ վայրից: Հավանաբար դրանք մեկին այնտեղ խանգարել են, նա էլ «ազատել է» տարածքը և որոշել օգտագործել դրանք որպես շինանյութ: Ոչ մեկը չի փորձել կանխել տապանաքարերի տեղահանումը, ջարդը: Տապանաքարերի ճիշտ մեջտեղում՝ հավերժության նշանների արանքում, սատկած մի շուն կար, քիչ այն կողմ խաչի պոկված մի կտոր:

Տապանաքարերի տեսքը, նրանց վրայի քանդակները հուշում են, որ դարերի պատմություն ունեն, մշակութային արժեքներ են:

Մենք՝ հայերս, մեր նախնիների տապանաքարերով հերթական ռեստորանը կամ հյուրանոցն ենք կառուցում: Քելթաքարում մեր քանդված եկեղեցիների քարերով, խաչքարերով աղբբեջանցիները տներ էին սարքում: Այնտեղ տասնյակ գյուղերում այդպիսի տներ կան: Երևանում


նույն բանը մենք ենք անում:

Ողջ հայությունն այսօր համախմբվել և բողոքում է Նախիջևանում աղբբեջանցիների կողմից հայկական խաչքարերի բարբարոսական ջարդի դեմ: Հայերիս դեմ այստեղ ո՞վ պետք է բողոքի ու պայքարի: Գուցե դիմե՞նք միջազգային տարբեր կառույցներին և խնդրենք, որ գան, մեզանից պաշտպանեն մեր իսկ մշակութային արժեքները:

Չեզ թվում է, թե այս պատկերները տեսնելուց հետո մշակույթի նախարարը, դատախազը, կամ մեկ այլ պաշտոնյա գնալու, զբաղվելու է այս հարցով: Իհարկե, ոչ, նրանք ավելի կարևոր գործեր ունեն. մեկը զալիք համահայկական մշակութային միջոցառումն է ծրագրում, մյուսը ծառ է տընկում, երրորդը հյուրանոց է կառուցում, չորրորդը էլիտար շենք՝ Երևանի կենտրոնում, հինգերորդը կոռուպցիայի դեմ պայքարի շուրջ է կազմակերպում Ազգային ժողովում, և այսպես շարունակ...

Էդիկ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ

ԿԻՍԱՏ-ՊՌԱՏ ԵՐԿԻՐ ՀԱՅԱՍՏԱՆՍ



Ամեն օր, ամեն ժամ Հայաստանից մի շատ կարևոր բան է պակասում:

Պարտքի դիմաց՝ գույքը, գույքի դիմաց՝ գազը, կամ անկախությունից փաստացի զրկված երկիրը չէ նույնիսկ այսօրվա մեր մտահոգիչը: Այլ՝ այդ ամենի հանրագումարում

հաշվվող սերունդը, տեր է մարդը սեփական երկրում՝ այլոց երկրներից կցորդ դարձած հողն ու ժողովուրդը:

Ամեն Աստօն օրը Հայաստանում բաղձալի անկախությունը փոքրանում, ուժացվում, հյուծվում ու պակասում է: Դառնում է անիրական ու անպետք: Համատարած, պակասեցման ենթարկված մարդը դառնում է ավելի ու ավելի անտարբեր այն ամենի նկատմամբ, ինչը վաղը դառնալու է իր և իր զավակների վաղվա օրվա պա-

կասության պատճառը:

Հայաստանում ամեն օր ու ամեն ժամ կյանքն ավելի անհույս ու անլույս է դառնում: Արևելյան շեյխերին հատուկ վայելքներն ամենօրյա ապրելաձև դարձրած ֆեոդալ-օլիգարխը նույնիսկ ենթագիտակցորեն հասկանում է, որ ամեն ինչ զնուց է դեպի կործանարար վերջ: Ուր մնաց՝ սովորական մահկանացու ժողովուրդը, հասարակության մեջ այդպես էլ չարժեքավորված մարդ-քաղաքացին ու նրա ապագայով մտահոգ ամուլ ընդդիմադիրը:

Հետաքրքրական է, որ վերջին գնալու ճանապարհը ժողովուրդն ինքն է իր համար հարթել ու վճռել անարդարորեն հաշտվել համատարած պակասությունների հետ:

Իշխանությանը պակասում է բավարար լեզվատիրություն, ընդդիմությանը՝ հանձնառություն և համարձակություն, օլիգարխներին՝ խելք, ժողովրդին՝ իմաստություն: Համատարած պակասություն է՝ արժեքների, հավատամքի ու տեսլիքի:

Պակասը, դատարկությունը լցնելու, ամբողջացնելու մի միջոց կա թերևս:

Պետք է առաջին հերթին գիտակցել, որ համատարած պակասավոր ենք, բոլորս պատասխանատու և մասնակից ենք ստեղծված իրականության համար, պակասավոր ենք, որովհետև մենք զմեզ ավելացնելու նախանձախնդրությամբ չենք առաջնորդվել, այլ հարազատից, ընկերօջից ու բարեկամից հարկ եղած ժամանակ փախցնելով, վաշխառուաբար ենք փորձել լցնել մեր ներսի պակասը: Պակասավոր ենք, որովհետև համապատասխան կյանքում պակասության հետևանքով ստեղծված համատարած անարգանքի ու անարդարության դեմ պայքարելու փոխարեն՝ երեկ էլ, այսօր էլ՝ ուժը տվել ենք ուղքներիս ու այդ պակասը փորձել ենք լրացնել օտարի ավելցուկով: Թ՞ե թերմացքով:

Այսպես՝ կիսատ-պռատ ոտն չի սարքվի, եթե մեր ուզածը տուն է, ոչ թե՛ Աստված գիտե, թե ինչ: Գուցե պետք է նորի՞ց քանդել, որ ազատվենք պակաս-պռատության այս անտանելի բեռից: Գուցե քանդելու բան արդեն չի էլ մնացե՞լ: Չգիտեմ:

Արման ԲԱԲԱԶՆՅԱՆ

49 ՆՈՐ ՇԱՀՈՒԹԱԲԵՐ ԲԻԶՆԵՍ

ամեն ինչ սկսվում է նրանց իրազեկումից: Ինչքան էլ այդ ուղղությամբ աշխատանքներ տարվում են, այնուամենայնիվ, շատերը չգիտեն, որ հասնել որևէ երկիր և ապաստան խնդրել դեռ չի նշանակում աշխատելու և ապրելու իրավունք ստանալ: Լավագույն դեպքում նրանց սպասվում է փախստականների ճամբարում ժամանակավոր բնակեցում, մինչև ապաստան ստանալու դիմումը կքննվի: Իսկ դիմումների գերակշիռ մասը մերժվում է», - տեղեկացրեց մեր գրուցակիցը, հավելելով, որ ճամբարներում բնակության պայմանները բարվոք չեն: Գերմանիայում, օրինակ, որպես ճամբար ծառայում է ավից հեռու կանգնած մի նավ: Եմիգրանտների դիմումն իր պատասխանը գտնում է մինչև մեկ տարվա ընթացքում, մերժման դեպքում դրան հետևում է 1-2 տարի ձգվող դատական գործընթացը, որպես կանոն՝ այն ավարտվում է մերժման վճռով: Դրանից հետո էմիգրանտին սպասվում է «դեպորտ»՝ վտարում տվյալ երկրից: Փոքր-ինչ, նյուրին է Ապենինյան երկրներ զննածների վիճակը Իսպանիայում, Գլոմաստանում, Պորտուգալիայում և հարակից մյուս երկրներում միգրացիոն վերահսկողությունը համեմատաբար թույլ է, գործատու-

ներն էլ էժան աշխատուժ անլեզակներին չեն մերժում իրենց շահի համար: Այնուամենայնիվ, նույնիսկ վտարման դեպքում էմիգրանտների ճակատագիրն այնքան էլ սարսափելի չէ: Վերջին տարիներին Հայաստանի միգրացիայի վարչության և Շվեյցարիայի, Դանիայի ու Ֆրանսիայի կառավարությունների համատեղ ջանքերով էմիգրանտների վերադարձի ծրագիր է մշակվել, որով 1-2 ամիսը մեկ 2-3 ընտանիք է վերադառնում հայրենիք: Ծրագիրը ֆինանսավորում են արտաքստ երկրները: Ընորհիվ օժանդակության համապատասխան ծրագրերի, էմիգրանտներից շատերը վերադառնալուց հետո ձեռք են բերել խանութ, սնկի արտադրամաս և այլն: Ստացվում է, որ մարդիկ խաբեությամբ հայտնվելով այլ երկրում՝ ապրում են այդ երկրի հաշվին մի քանի տարի, և վերադառնալիս էլ առանց մի լուծա ծախսելու՝ սեփական գործի տեր են դառնում: Ոմանց համար հայրենիքից հրաժարվելը բավական շահավետ արդյունք է տալիս, այն դեպքում, երբ աղքատության մեջ ապրել շարունակադներին ոչ բարոյական, ոչ էլ նյութական առաջընթաց գրանցել չի հաջողվում:

Սյուզան ՄԱՆԱՍՅԱՆ

ՄԱՇՏՈՑԻՑ ՉՈՐՄ ԴԱՐ ԱՌԱՋ ԵՎ ԱՎԵԼԻ



Չարմանք է հարուցում այն նախանձելի միասնական եռանդը, որով հետազոտողների մեծ մասը մերժում է հին հայերեն գրի և դպրության գաղափարը կարծես միայն նրա համար, որպեսզի հետո անեն կերպ պնդեն, թե Մաշտոցն իր հայերեն այբուբենը ստեղծել է հունական, ասորական, արամեական, պահլավիկ և իրեն ժամանակակից էլի ինչ-որ հայտնի ու անհայտ այբուբենների ձևափոխված տառերից: Մի՞թե Մաշտոցը կարող էր իր իսկ ձեռքով արած այդ ձևափոխումները ներկայացնել իբրև Աստծո թաքի գծագրություն և իբրև աստվածային տեսիլքով շնորհված հայերեն տառեր: Եվ վերջապես հասկանալի չէ, թե ինչո՞ւ Մեսրոպ Մաշտոցը պետք է դեն նետեր Դանիել Ասորու գտած հին հայերեն 24 նշանագրերը և դրանք պարզապես լրացնելու փոխարեն զբաղվեր հարևան օտար ազգերի այբուբեններից նույնքան տառեր ձևափոխելով: Եթե այդպես լիներ, ապա Խորենացին այս դեպքում ևս կարող էր ասել, թե Մեսրոպը «մուրացված գծագրությամբ» է ստեղծել հայոց այբուբենը: Իմ համոզմամբ, Մեսրոպ Մաշտոցը հայոց նոր այբուբենը ստեղծելիս օգտվել է հայոց հին այբուբենից մնացած այն 24 նշանագրերից, որ գտել էր Դանիել Ասորին և այնուհետև եղեսիայում լրացրեց դրանք իր նորաստեղծ բաղաձայն և ձայնավոր նշանագրերով: Այդ հին հայերեն այբուբենով էր գրված հեթանոսական շրջանի հայալեզու գրականությունը: Մինչև այժմ մաշտոցյան այբուբենը հարաբերության մեջ է դրվել ամենատարբեր այլալեզու գրային համակարգերի հետ: Այս առումով ամենից համապարփակ ուսումնասիրությունը պատկանում է մեծանուն Յ. Աճառյանին, որը մեսրոպյան այբուբենը համեմատել է 17 օտար այբուբենների հետ և կազմել համեմատական տախտակ՝ յուրաքանչյուր տառի ձևի և ծագման մասին տալով իր եզրակացությունը: Այսուհանդերձ մինչ այժմ ուսումնասիրողների տեսադաշտից դուրս է մնացել խարոշթի գիրը, որը Ք.ա. I հազարամյակի կեսերին ի հայտ եկավ Յնդկաստանում և բրահմի հնդկա-արիական գրի գուգահեռ գործածության մեջ էր այդ ժամանակից Մագաթիս պետության հիմնադրումից ի վեր: Խարոշթի գրի նախահայրենիքի մասին այսօր էլ աղոտ պատկերացումներ կան ճանաչված հնագրագետների շրջանում: Ք.ա. IV դարում Յնդկաստանում Մաուրյա հարստության արքաները, խարոշթի գիրն իրենց մեծ տերության վարչական և տնտեսական պահանջներին ծառայեցնելու հետ միաժամանակ, ինչպես ենթադրվում է, հնդկական լեզուներին առավել հարմարեցնելու նպատակով, ընդունեցին պաշտամունքային բրահմի գրի հիմնական սկզբունքները, այդ թվում և գրության աջընթաց ուղղությունը, որի շնորհիվ խարոշթին լայն տարածում գտավ հյուսիս-արևմտյան Յնդկաստանում և նրան Արևմուտքից սահմանակցող հունական Արիամայում և Բակտրիայում, որոնք Ք.ա. III դարի կեսերից մտան Հունա-Բակտրիական թագավորության, և ապա Պարթևական տերության մեջ, իսկ Ք.ա. I դարից՝ ընկան քուշանների իշխանության տակ: Այս պատճառով էլ խարոշթին ստացել է նաև հունա-բակտրիական գիր անունը: Խարոշթի գրի մինչև այժմ պահպանված հնագույն արձանագրությունները պատկանում են Մաուրյա հարստության տիրապետության շրջանին՝ Ք.ա. 317-185թթ.: Թեև բրահմին և խարոշթին վանկային այբուբեններ էին, բայց հասցվել էին ձևի և հնչյունային այնպիսի ինքնատիպության, որ լիարժեք արտա-

հայտում էին միջին հնդկական լեզուների բաղաձայնի և ձայնավորի հնչյունների ամբողջ կազմը, ի հակադրություն ենթադրվող քամական (փյունիկյան) և սեմական (արամեական) գրային նախատիպերի, որոնք գրեթե ամբողջապես զուրկ էին ձայնավոր նշաններից: Ստորև հայ և օտար հնագրագետների ուշադրությանն են ներկայացնում մ.թ. 38 թվի մի քուշանական արձանագրություն, որը տեղ չի գտել համաշխարհային այբուբենների միջով և համընդհանուր տեղեկագրերում: Արձանագրությունը երեք գծատողում պարունակում է խարոշթի գրի ավելի քան 80 տառանիշ, այդ թվում՝ շուրջ 40 տառաձև, որոնց մեջ առկա են հայկական 27 տառանիշ և առնվազն 17 տառաձև՝ նույնական կամ նման մաշտոցյան այբուբենի տառերին:

I տող՝ կ, ծ, ս, ա, ր, դ, Ռ;
II տող՝ ա, չ, g, q, կ, ի, q, ը, մ (°), հ, ի, Գ;
III տող՝ Պ, Տ, ք, (°), հ, ր, Գ, g, ք, (°):
 Ի՞նչ է ստացվում. բազմաթիվ բանասերներ և հնագրագետներ համառորեն ապացուցում են, ինչպես տեսանք, որ Մաշտոցը հայերեն տառերը ձևափոխել է V դարի սկզբին ժամանակակից հունարեն և այլ այբուբեններից, մինչդեռ իրականում այդ «ձևափոխված» տառերը արդեն իսկ առկա են դրանից մոտ չորս դար առաջ՝ մեր թվարկության սկզբին գրված արձանագրության մեջ: Անտարակույս դրանք հենց Դանիել Եպիսկոպոսի գտած հին հայերեն նշանագրերն են, որ Մաշտոցը ներառել է իր ստեղծած նոր հայոց այբուբենի մեջ, և իրենց գծագրությամբ և ոճավորմամբ ի հայտ են բերում հեթանոս հայերի օգտագործած այբուբենի սերտ աղերսն ու ազգակցությունը հնդկա-բակտրիական խարոշթի գրի հետ: Շուրջ 40 տառապատկերի առկայությունը սույն արձանագրության մեջ, որը դեռևս ամբողջական այբուբեն չի ներկայացնում, թույլ է տալիս եզրակացնել, որ խարոշթի կոչված հնդկա-բակտրիական գրին ազգակից հին հայերեն հնչյունական այբուբենը բավական թվով նշանագրեր պետք է ունենար հայոց լեզվի բաղաձայն և ձայնավոր հարուստ հնչյունային համակարգն արտահայտելու համար: Քուշանների թագավորության անկումից հետո (Ք. հ. III. դ.) խարոշթի գիրը դուրս եկավ գործածությունից և տեղը գրավեց բրահմին: Դա հենց վկայում է, որ խարոշթին ազգակից հայոց հին գիրը գործածության մեջ է եղել Հայաստանում Ք. ա. III դարից շատ ավելի առաջ: Ըստ երևույթին նրանց աղերսակցությունը վերաբերում է մեր թվարկությանը նախորդած դարերին: Յնդկա-բակտրիական և հայոց հին գրերի շփման երկու հիմնական եզրերից մեկը հեթանոս հայերի ունեցած սերտ հարաբերություններն էին Յնդկաստանի և Բակտրիայի հետ - վերջինիս մայրաքաղաքն էր հայ հին պատմիչների մոտ հաճախ հիշատակվող Բահլը կամ բուն Պահլավը հին պարթևների բնիկ հայրենիքը, որոնց հետ հայ թագավորները հեթանոս ժամանակներից դիմաստիական կապեր ունեին: Իսկ երկրորդ շփման եզրը դեռ քրիստոնեությունից առաջ Հայաստանում՝ Տարոն գավառում հնդիկ քուրմերի հիմնած Դեմետր և Գիսանե կուռքերի պաշտամունքն էր: Մեսրոպ Մաշտոցը եղել և մնում է քրիստոնեական շրջանի հայ նոր գրի ու դպրության ստեղծողը և արժանապես սրբացվել է իբրև լուսավորության հանճար: Նրա ստեղծած հայոց նոր այբուբենը հավիտենական պատգամ է ուղղված հայ ժողովրդի բոլոր սերունդներին՝ այլևս ոչ մի պայմանով մոռացության չտալ հիմնավորց հայոց գիրը, որպեսզի էլ երբեք անհրաժեշտություն չլինի այն հայտնաբերել:

ՀԱՅՈՑ ԼԵԶՎՈՎ ԳՐԲԵՐ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻՑ 4 ԴԱՐ ԱՌԱՋ

Նախաքրիստոնեական շրջանում գոյություն ունեցած հայերեն գրի և գրականության մասին վկայություններ են պահպանվել անտիկ օտար հեղինակների երկերում: Հռչակավոր հույն փիլիսոփա և պատմագիր Մետրոդորոս Սկեփսիացին, ապրելով Պոնտոսում և Հայաստանում մինչև մ.թ.ա. 70թթ., գրել է Տիգրան II-ի պատմությունը և «Կենդանիների բանականությունը» փիլիսոփայական երկը: Այս վերջինը, ըստ Փիլոն Եբրայեցու (Ալեքսանդրացու) հաղորդման, որն ապրել է մ.թ.ա. I դ. վերջին քառորդից մինչև մ.թ. I դ. կեսը, թարգմանված է եղել հայերեն: Փիլոն Եբրայեցու նման քաջատեղյակ և բժախնդիր օտար հեղինակի այս համոզիչ հաղորդումը մեր թվարկության դարազրկ սերունդներին ունեցած հայալեզու գրականության մասին, որ վկայակոչվում

է առաջին անգամ, չի կարող չսասանել նույնիսկ ամենակարծի հակաթեզերը: Հենց միայն Փիլոնի սույն վկայությունը բավական է ժխտելու այն տարածված կարծիքը, որ եթե նախամաշտոցյան շրջանում գոյություն է ունեցել գրավոր հայ գրականություն, ապա միայն հունարեն, ասորերեն կամ պարսկերեն լեզուներով, իսկ հայոց լեզվով եղել է միայն բանավոր գրականություն, այսինքն՝ բանահյուսություն: Եվ անմիջապես հարց է ծագում՝ ի՞նչ գրով են գրված եղել երեք հայալեզու գրքերը, եթե ոչ հայերեն այբուբենով, որի մասին վկայում է III դարի ժամանակագիր և եկեղեցական մեկնիչ Հիպպոլիտոսը: Հունարեն բնագրով իր «Ժամանակագրության» մեջ՝ գրված Ալեքսանդր Սևերոս կայսեր 13-րդ տարում՝ մ.թ. 234-235թթ., Հաբեթի ցեղի 47 ազգերի շարքում որպես գրագետ (գիր ունեցող), Հիպպոլիտոսը հիշատակում է հետևյալ յոթին՝ իբերներ, լատիններ, որոնց գիրը և հռոմեներն են գործածում, իսպանացիք, հույներ, մարեր, հայեր: Խորենացու վկայությամբ, Բարդաժան ասորի պատմագիրը, որ եղեհիայից էր, մտավ Անի կամ Հանի ամրոցը, կարդաց Ողյունյաքումի մեհենական պատմությունը, որի մեջ թագավորների գործերի հետ միասին հիշատակված էր Տիգրան վերջին հայոց թագավորի ձեռքով նրա եղբայր Մաժան քրմապետի գերեզմանին կառուցված բազիլիկ Բագրևանդի Բագավանում: Ի՞նչ լեզվով էր գրված այդ մատյանը. եթե Բարդաժանը, ինչպես վկայում է Խորենացին, այդ պատմությունը փոխադրել է ասորերենի և ապա հունարենի, նշանակում է՝ մեհենական պատմության բնագիրը պետք է եղած լիներ հայերեն և գրված հայերեն գրերով: Ուսումնասիրողներից ոմանք, ինչպես Ա. Աբրահամյանը, ենթադրում են, թե մատյանը գրված է եղել արամեական գրով, բայց այս կարծիքը հիմնավոր չէ: Ասորիներն իրենք իսկ արամեական գիր են գործածում և հատկապես եղեհիայի շրջանում: Սույնը վերաբերում է Տիր աստծո մեհյանին: Գերմանացի խոշոր հայագետ Յ. Մարկվարտը իր «Հայոց այբուբենի ծագումը և Մաշտոցի կենսագրությունը» ուսումնասիրության մեջ ժխտում է հայ մատենագրության գոյությունը մինչև V դարը հետևյալ փաստարկով: «Այս երկրի լեզվով չէր գրվել դեռ ոչ մի տող, որովհետև այն ժամանակվա հայտնի այբուբեններից և ոչ մեկը ի վիճակի չէր արտահայտելու հայերեն բազմաթիվ ու դժվարին հնչյունները»: Գերմանացի հայագետի այս ուշագրավ միտքը մեզ բերում է հակադարձ տրամաբանության՝ եթե նախամաշտոցյան շրջանում եղել է հայ


մատենագրություն, ապա դա կարող էր լինել միայն հայերեն այբուբենով, և ոչ թե արամեատառ կամ հունատառ: Եվ առհասարակ, մի շատ բնական հարց է ծագում. հնարավոր է արդյոք, որ ժողովուրդն ունենա գրի ու դպրության Տիր աստված, այդ Տիր աստծուն նվիրված դպրության մեհյան, բայց սեփական գիր և դպրություն չունենա: Օտար դպրության, օտարագիր և օտարալեզու մատենագրության համար հայերենի աստվածություն չի ստեղծվում: XIII դարի հայ պատմիչ Վարդան Արևելցին (Պատմութիւն տիեզերական, Մոսկվա 1861, էջ 70) վկայում է Լևոն արքայի օրոք Կիլիկիայում հայտնաբերված դրամի մասին, որի վրա հայերեն լեզվով դրոշմված են եղել հեթանոս հայ թագավորների անուններ, որով և պատմիչը հաստատում է Մեսրոպ Մաշտոցից առաջ հայերեն գրերի գոյությունը: «Եւ գի լեալ է հայերէն գիր ի հնոյն- վկայեցաւ ի ժամանակաս Լևոնի արքայի. գի գտաւ դրամ ի Կիլիկիա հայերէն գրով դրոշմեալ զանուն կռապաշտ թագաւորացն Հայկազանց»: Նման հարցադրումներն արդեն իսկ իր մեջ կրում է նախամաշտոցյան գրի գաղափարը, որն ունի կողմնակիցներ, բայց և ավելի մեծ թվով հակառակորդներ, որոնք կարծում են, թե նախամաշտոցյան գիրը կարող է նեմացնել Մաշտոցի հանճարը: Կատարյալ քյուրիմացություն: Ահավասիկ մեր հին հեղինակներից շատերը և առաջին հերթին 5-րդ դարի ներկայացուցիչները՝ սկսած Սահակ Պարթևից և Մեսրոպ Մաշտոցից, նրանց աշակերտներ Կորյունը, Դավիթ Անհաղթ փիլիսոփան և Մովսէս Խորենացին, ապա և Դազար Փարպեցին և այլք, ընդունում են հեթանոսության շրջանում հայոց դպրության գոյությունը. հայոց գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում իմ զեկուցման մեջ ես ցույց տվեցի, որ ինքը՝ Մաշտոցը, երկար ժամանակ եղեհիայում և Ասորիքում դպրության հեթանոս ճարտարների մոտ, որոնց է հայոց հին գրի ամբողջական այբուբենը: Վերը իմ հիշատակած Փիլոն Երևայեցին իր ժամանակի ճանաչված մտածողներից մեկը, որին ենգելսը քրիստոնեության հայր է անվանում, իր եզակի վկայությամբ գալիս է հաստատելու հայալեզու գրականության իրողությունը դեռևս մեր թվարկության սկզբին՝ Մեսրոպ Մաշտոցից 4 դար առաջ:

Ալբերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

ՏՈՆՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀԱՊԱՆ

Վերջին տարիներին մեր հասարակությունը հատուկ վերաբերմունք է դրսևորում հայ ժողովրդական տոների նկատմամբ: Սակայն դրանց մասին տեղեկատվության պակասից առաջացած դատարկ տարածությունը լցվում է ոչ թե ավանդական մտածողության հետ կապված հասկացություններով, այլ փոխ են առնվում մեր ժողովրդի հոգեբանությունն ու կենցաղը չարտահայտող օտար ու շինծու տոներ:

Մեր տոներով կենցաղը իմաստավորելու շնորհակալ գործ է կատարել ազգագրագետ Հրանուշ Խառատյան-Առաքելյանն իր «Հայ ժողովրդական տոները» գրքով, որը լույս տեսավ 2000 թ. և անմիջապես սպառվեց: Գրքի մեծ պահանջարկն ստիպեց, որ այն երկրորդ անգամ հրատարակվի: Այդ առիթով հեղինակը գրում է. «Իմ ամենամեծ ցանկությունն էր՝ հրատարակության պատրաստել «Հայ ժողովրդական տոների» գիտական ուսումնասիրությունը: Սակայն տուրք տալով պահանջարկին և անհրաժեշտությանը, ընթերցողին է ներկայացվում «Հայ ժողովրդական տոները» գրքի 2-րդ, լրամշակված տարբերակը»: Գրքում ընդգրկված են բոլոր հայտնի տոները՝ Նոր տարի, Ծնունդ, Ջրօրհնեք, Տյառնընդառաջ, Սուրբ Սարգիս, Բարեկենդան, Մեծ պաս, Ծաղկազարդ, Ջատիկ, Համբարձում, Վարդավառ, Խաղողօրհնեք, Սուրբ խաչ և այլն: Յուրաքանչյուր գլխի համար ներկայացված է օգտագործված գրականության ցանկ, հեղին-



նակն ի մի է բերել տոներին վերաբերող մատենագրության մեջ եղած հրատարակված նյութը: Գրքում առաջարկվում է նաև Վարդավառի անցկացման սցենարը, ընդգրկված է վերլուծական երկու հոդված, ուր հայ ժողովրդական տոների ծեսերի միջոցով ներկայացվում են տղամարդ և կին փոխհարաբերությունների զուտ հայկական ընկալման յուրահատուկ հասկա-

ցություններ («Ուտիս տատը և պաս պապը») և մի քանի սրբերի կերպարների ժողովրդական ընկալումներ: Առանձին զլխով ներկայացված են տոներին առնչվող ասացվածքներն ու բանաձևերը:

Ուսումնասիրելով հասարակության վերաբերմունքը տոների նկատմամբ և ամփոփելով սոցիոլոգիական հետազոտությունները՝ Հ. Խառատյանը եկել է այն եզրակացության, որ այսօր հայ հասարակությունը, չնայած մեծ ցանկությանը, տոները չի ընկալում որպես կենցաղն ու ապրելակերպը իմաստավորող երևույթ: Պատճառն այն է, որ 1915-20 թթ. արևմտահայության ցեղասպանության և 1920 թ. Արևելյան Հայաստանում տեղի ունեցած քաղաքական-հասարակական փոփոխությունների հետևանքով փոխվեց ավանդական ազգային արժեքների բնականոն զարգացման ուղին, կտրվեց սերունդների միջև եղած մշակութային շարունակական կապը: Անշուշտ, բնականոն կյանքով ապրելու դեպքում ժողովրդական տոներն ավելի ամբողջական կլինեին իրենց սրբազան բովանդակությամբ, ազգային իմաստավորմամբ ու կփոխանցվեին սերունդներին՝ ավելի անմիջականորեն արձագանքելով ժամանակի պահանջներին:

Այսօր հայերն ինչ-որ չափով շեղվել ու հեռացել են իրենց կենցաղային ու սովո-

ԱՆՄՈՒԱՅ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Երևանի պետական համալսարանում ուսանելիս ես բախտ ունեցա բազմիցս գործնական հանդիպումներ ունենալու ճանաչված գրող Սերո Խանգադյանի հետ: Այդ հանդիպումները շուտով սովորական բնույթ ստացան: Նախաձեռնողը ինքը եղավ: Առիթն այն էր, որ համշենահայ երիտասարդ գրողները նրան հրավիրել էին Սոչի: Վերադառնալուց հետո ձեռնարկել էր կազմել և խմբագրել «Ձայն համշենական» ժողովածուն: Երբ այդ մասին իմացա, գտա հեռախոսի համարն ու զանգեցի իրեն, ասացի ով լինելու:



- Արի մեր տուն, - խաչուտ ծայրով հրավիրեց գրողը, ասաց հասցեն: Ձայնից զգացի, որ գիշերն անցկացրել է գրասեղանի առջև:

Նրա ստեղծագործությունները կարդացել էի դեռևս դպրոցում սովորելիս, աշակերտական տետրում գրի առել հարյուրավոր թևավոր արտահայտությունները: Սկսնակ բանաստեղծիս համար Սերո Խանգադյանը պաշտամունք էր:

Դուռը բացեց ինքը, սեղմեց ձեռքս և առաջնորդեց աշխատասենյակ: Գրամեքենայի կողքին թղթերի կույտեր էին: Երբ նստեցիքս, հարցրեց որտեղացի լինելիս, ծնողներիս մասին և հետաքրքրվեց, թե

ինչ են գրում:

- Եթե գրողը զանգուլակներ է գրում, Սիրավան, ուրեմն ասելիք չունի, - ասաց ու վեր կացավ, սեղանին դրեց երկու փոքրիկ բաժակ, լցրեց օղի:

- Քարահունջի լավ օղի է, Սիրավան ջան, խմենք մեր ծանոթության կենացը, - ասաց ու բաժակը մի կունով դատարկեց: Ամեն անգամ Սերո Խանգադյանի մոտ գնալիս զգացել եմ իմ նկատմամբ այսուհանդերձ տնավարի վերաբերմունքը:

Այնուհետև գրողը վերցրեց թղթապանակներից մեկը և առաջարկեց.

- Սրանք գրված են ձեր համշենի բարբառով, դրանք դու խմբագրիր, մաքրագրիր, իսկ գրական բաժինը ես ինքս կնայեմ:

Դրանք տարբեր հեղինակների ստեղծագործություններ էին, ասացվածքներ, հանելուկներ, մանիներ, հեքիաթներ: Առաջին անգամ իմ առջև դրվեց գրական ահռելի պատասխանատու գործ: Համալսարանի կոմերիտմիության կազմակերպության առաջին քարտուղարը մտերիմ ընկերս էր՝ Ռոբերտ Դավթյանը: Ժամերով նստում էի նրա կարիներտուն և մեքենագրում համշենի բանահյուսության մուշկները, ապա մաս-մաս տանում Սերո Խանգադյանին: Ինքն էլ շատ լրջորեն աշխատեց ապագա ժողովածուի գրական մասի վրա: Մի օր տեսնեմ հեղինակ Անդրանիկ Ջեթոնյանի ծավալուն պատմվածքի 13-րդ էջից անցել է 39-ը էջը:

- Այդ ո՞նց, - ընկեր Խանգադյան, - հայտնեցի զարմանքս:

- Հանածո էջերում լրիվ զանգուլակներ են, - համոզիչ տոնով ասաց հայոց սպարապետը:

«Ձայն համշենական» ժողովածուն հրատարակվեց 1971 թվականին: Այն սկսվում էր Սերո Խանգադյանի «Համշենցի հայերի մոտ» ծավալուն առաջաբանով: Դա բացթողնակապես երևույթ էր մայր հայրենիքից կտրված համշենահայ իրականության կյանքում: Ի շնորհիվ մեծ գրողի ու հայրենասերի ջանքերի, «Ձայն համշենականը» եկավ հավաստելու, որ Հայաստանից դուրս ևս ստեղծվում է հայ գրականություն և հարկավոր է այդ հեղինակներից աջակցի լինել: Եվ իսկապես, դրանից հետո շարունակվեց նոր ժողովածուների լույս ընծայումը:

Գրքում ինձանից տպագրվել էր տասնութ ոտանավոր:

- Ամենահաջողը քո բաժինն է, - ասաց Սերո Նիկողոսյանը:

Համառոտ ծանոթագրության մեջ իմ մասին գրել էր. «Պետական համալսարանի ուսանող է: Ծնվել է Մայկոպի հայկական գյուղերից մեկում: Գիտակ է համշենի խոսվածքին ու կյանքին»:

Մի երեկո անցնում Լուսինե Չաքարյանը համալսարանում Կոմիտաս էր երգելու: Այդ մասին հայտնեցի իրեն: Ոգևորվեց: - Կգաս, կգնանք միասին, - ասաց գրողը:

Դահլիճում նստել էինք իրար կողքի, տեսնել էր պետք, թե ինչպիսի՞ ներանձնական լարումով էր լսում ծիծեռնակածայն երգչուհուն:

Հայաստանում բնակվող համշենահայերի համար բարի ավանդույթ էր ամեն տարի մարտի ութին հավաքվելը, հիշել իրենց պատմական անցյալը, նվազել, երգել ու պարելը, ուրախանալը այսօրվա կյանքով: Քանի որ ուսանող համշենցիների մասն հանդիպումներ ես էլ էի կազմակերպում, ինձ էլ հրավիրեցին: Ասացի՝ Սերո Խանգադյանին էլ հետս կբերեմ: Ուրախացան: Հավաքը տեղի ունեցավ «Արարատ» ռեստորանում: Սերոն եկավ կնոջ՝ Ժենյայի հետ: Անչափ բովանդակալից խոսք ասաց.

- Հացի պրոբլեմը հիմա լուծված է, մարդկանց պակասում է հոգևոր սնունդը, այսպիսի հավաքները, բանդիպումները ներծեցնում են սրտերը, բարեհամբույր դարձնում միմյանց նկատմամբ, վեհացնում:

Սերո Խանգադյանի խոսքը ձայնագրվում էր և տեքստասնվեց թուպե, ընդունվեց մեծ ուշադրությամբ:

Լրագրության բաժնում մեր դասախոսությունները սկսվում էին ցերեկվա ժամը երկուսն անց հինգ թուպե և ավարտվում երեկոյան ժամը յոթին: Օրընդմեջ ես շտապում էի ավտոբեռնիչների գործարան, ուր նյութական կարիքս թեթևացնելու համար պահակություն էի անում գիշերները: Այստեղ էլ մոտիկից շփվեցի Լեռ Կամսարի փականագործ որդու հետ: Նա ինձ տվեց հոր հրատարակված, բայց արգելված գրքերից, որոնցից մեկը կոչվում էր «Գրաբար մարդիկ»: Դրանք տվեցի Սերո Խանգադյանին, կարդաց մեծ հետաքրքրությամբ:

- Եթե գրաքննչական չարաբաստիկ զլավիտը չլիներ, Լեռ Կամսարի հռչակը բերնեբերան կտարածվեր, - եզրակացրեց մեծ գրողը:

Նրան նվիրեցի մալ մեծ դժվարությամբ ձեռք գցած Հրաչյա Աճառյանի «Քննություն համշեն բարբառի» բացառիկ արժեքավոր գիրքը:

Ե՞րբ էր Սերո Խանգադյանը այդքան ժամանակ գտնում և՛ գրելու, և՛ կարդալու, և՛ հանդիպումներ ունենալու: Ես միշտ էլ զարմանում էի: Երբ հանդիպում էի, «Երեկոյան Երևան» կամ «Ավանգարդ» թերթերում արդեն կարդացած էր լինում թղթակ-

100

րույթային դարավոր մտածողությունների՝ սուրբ տալով բազմաթիվ օտար, հայի հոգեբանությանը խորթ տոների ու սովորույթների, ինչպիսին օրինակ Ս. Վալենտինի տոնն է: Այդ իսկ պատճառով նախ հարկավոր է հասարակությանը տեղյակ պահել հայ ժողովրդական տոների ակունքներին: Բանն այն է, որ դարասկզբին ապրած և այսօր ապրող հայի հոգեբանությունը նույնը չէ: Այն, ինչ խոր իմաստ ուներ 100 տարի առաջ, այսօր կարող է անհիմաստ և տարօրինակ թվալ:

Տոների մասին տեղեկանալով՝ այսօրվա սերունդն իր եզրակացությունը կանի: Դրանք կվերականգնվեն, եթե ժողովուրդն ինքը հասկանա դրանց իմաստն ու նպատակը, իսկ թե ինչն է նրա սրտին մոտ՝ կերևա նրա վարքագծից: Այսօր էլ կարելի է շատ բան վերականգնել, ինչպես օրինակ տոներին բնորոշ խաղերը, որոնք մարդու մտավոր ու մարմնական դաստիարակության գործնական միջոցներ են:

«Հայ ժողովրդական տոները» գրքի թե՛ առաջին, թե՛ երկրորդ հրատարակությունները այսօրվա հայի համար իմացություն ձեռք բերելու և այն կենցաղում օգտագործելու հնարավորություն են ստեղծում: Ըստ տվյալի այս աշխատության կարիքն ու պահանջարկը տեղին ու ժամանակին են (զուգեց նույնիսկ ուշացած) իր արմատներից կտրված նոր սերնդին ազգային մտածողության ուղիով տանելու և ազգային հանկարծությունների ժամանակակից մտածողությամբ կենցաղը իմաստավորելու համար:

Ա. ԱՍԻՐԻԱՆՅԱՆ

ցուրյուններս և հայտնում էր իր կարծիքը:
Մի անգամ բացեց թրթապանակը և ցույց տվեց մի խմբանկար: Նկարում միջին տարիքի բեղավոր և անբեղ այրեր էին պատկերված:

- Սրանք համշենցիներ են, մահմեդականացած, խոսում են ձեր բարբառով, ապրում համշենցու նիստուկացով, արքորված են եղել Աջարիայից Միջին Ասիա՝ Կիրգիզիա: Ուզում են գալ Հայաստան: Ես

դիմել եմ մեր կառավարությանը նրանց տեղափոխելու համար, - սրտի ցավով ասաց մեծ գրողը, մեծ հայրենասերը, մեծ մարդասերը:

Սակայն նման հարցերը կարգավորում էր Մոսկվան:

Ես արդեն համալսարանն ավարտում էի լրագրողի մասնագիտությամբ:

- Դու հարկավոր ես արխագահայությանը, վերադարձիր տուն, - հեռատես-

րեն խորհուրդ տվեց Սերո Խանգադյանը: Վերադարձա և որպես «Սովետական Վրաստան թերթի սեփական թրթապանակից լծվեցի ազգանվեր գործի:

7 փետրվարի, 2005թ.

Սիրական Սեփոնի, Լազարևսկ

Լուսանկարում՝ Սիրական Սեփոնի և Սերո ԽԱՆԳԱԴՅԱՆԻ հետ լսում են Լուսինե ԶԱՔԱՐՅԱՆԻ

ПЕСНЬ ОБ АМШЕНЕ

Пусть стану я для недругов мишенью
И попаду под яростный обстрел,
Но я спою вам песню об Амшене,
Которую никто ещё не спел.

Вы слышите – рождаются в ущельях
Не ветер и не эхо, и не стон.
То голос нашей Родины – Амшена,
Из тьмы веков до нас доходит он.

Любовь к нему вошла в меня, как вирус,
Рассыпалась по порам, словно корь...
Когда-нибудь, но все-таки я вырвусь
К вам, берега родные (спорь – не спорь).

Приют последний – древний Ардашен,
Я помню облака твои и солнце,
Узнаешь ли, когда в родной Амшен
Праправнук стосковавшийся вернётся?

Фуртуны, Баловита и Варшама –
И лики рек узнаю я и гор:
Язык амшенцев, камни наших храмов
Живут во мне и дышат до сих пор.

Как гривы львов, Аравии пески
И желтые, как жадный глаз у тигра...
Следы армянской крови и тоски
Храните вы, и боль ещё не стихла.

Тот стон бессмертен. Он тревожит даль,
Последний стон армянки карекой...
Лишь в темных тайниках души твоей, Кемаль,
Родиться мог тот замысел жестокий.

Шла тень людей из кожи и костей,
Прося лишь хлеба и глоток воды лишь.

Еще качнутся стены крепостей,
Что на костях армянских возводили.

Расстреляны, заколоты, убиты
Миллионы наших братьев и сестер,
Засыпаны в песках, но не забыты,
Их души к нам взывают до сих пор.

Как жарки, Аравийская пустыня,
Твои объятия там, в чужом краю!
Жестокая! Твои пески доньше
Жгут память поседевшую мою.

Тень Ирода, Кемаль, тебя взрастила,
Рожден на свет из дьявольских затей,
Аравии пески ты превратил в могилы
И матерей армянских, и детей.

Весь арсенал убийств средневековых...
Что плач детей? Что крик до хрипоты?
Беременных, уже родить готовых,
Вы вспаривали женщин животы.

На свете я людей не знаю ниже:
Без разума – чудовища из снов!
Печальной памяти – ведь это вы там, в Нише,
Воздвигли склеп из сербских черепов!

Нет совести. А янычар немало!
Голодные! – Всегда готовы псы!..
Ждет Божий суд, гамиды и кемали!
Ещё пробьют истории часы.

Вы видите, как из лесов, ущелий
Ползут туманы. Медленно ползут.
Ещё не вечер. Но детей Амшена
Выходят тени. И ответа ждут.

ПАХАРИ АМШЕНА

Я кожей помню воздух деревенский,
Ещё земля в тумане до зари...
О пахари родных полей амшенских,
Уже вы за холмом, богатыри.

Земля моя! Какой здоровый запах!
От борозды такой бодрящий пар.
Вдали сияет белая папаха
Твоей вершины, вечный мой Каджжар.

А к полудню, когда лютует солнце,
Подобный солнцу, рыжий мальчуган
Спасительней самой воды в колодце
Из хноци несет амшенский тан.

О пахари могучие Амшена!
Как вам чужда мирская суета.
Играют мускулы легко и вдохновенно,
Как копии пархарского хребта.

Всё было так. От века и до века.
Омыт дождями. Солнцем опален.
И не было в Амшене человека,
Чтоб пахарю не отдавал поклон.

От моря Черного и до прохлады Вана
Вел борозду, пел песни оровел.
Теперь лишь след кровавый ятагана,
Который никого не пожалел.

И в этом мире, столь несовершенном,
Лишенном тех живительных корней,
Как я хочу вас, пахари Амшена,
Хотя бы в песне воскресить своей.

Крикор МАЗЛУМЯН.

Փոքրիկ Գոհարիկ

Ի՛նչ Գոհարիկ, անգին թոռնիկ,
Շնորհավոր քո ծնվելը.
Զնայած, որ հեռու եմ ես,
Բայց շատ ու շատ սիրում եմ քեզ:

Անհոգ, ուրախ դու մեծանաս,
Խելոք ու լավ բալիկ դառնաս,
Առողջ լինես, ժպտաս անհոգ,
Հպարտանանք մենք քեզանով:

Թող որ լինես սիրո կամուրջ,
Ծնողներիդ կապես իրար,
Դու այդ կապը այնպես պահես,
Որ սյունները չբերեան:

Կուզեի քեզ սովորեցնել
Մեր մեսրոպյան սուրբ տառերը,
Որ մեծանաս կարողանաս
Կարդալ տատիդ գրվածքները...



Թոռնիկիս

Քո ծնունդն է, իմ լավ Մերի,
Բայց հեռու ես, որ քեզ գրկեմ,
Զեռքդ բռնած խանութ տանեմ,
Գոնե տիկնիկ քեզ նվիրեմ:

Կուզեմ տորթը ես պատրաստեմ
Ու վրան չորս մոմեր շարեմ,
Ասեմ ես քեզ «Դե եկ, փչիր,
Իմ անուշիկ, իմ լավ բալիկ»:

Առավոտյան ձեռքդ բռնած
Մանկապարտեզ քեզ տանեի,
Իսկ քնելիս օրոցքիդ մոտ
Գողտրիկ հեքիաթ քեզ պատմեի:

Գոհար ՍԻՐՈՒՆՅԱՆ

ՀՐԱՎԵՐՔԻ ՀՐԱՎԵՐ...

... Խոսքը դարձյալ մեր ամենաթանկ, ամենասուրբ ունեցվածքներից մեկն է՝ Մայրենիի մասին է. մեր մեծասքանչն այսօր իր կոչման ու վեհության բարձրության վրա չէ. եթե դա շուկայում կամ փողոցում լինի, այլ բան, բայց այսպես, օրը ցերեկով, հենց այն հաստատություններում, որոնք կոչված են զանգի՝ պես հնչեցնելու և աղոթքի՝ նման բարձրացնելու այն...

Ոչ հեռու անցյալում, անկախության ժամանակի առաջին խորհրդարանում էր, որ, այսպես թե այնպես, դրվեցին դրա հիմքերը: ... Էլ «հունրվար» (երևի փետրվարի օրինակով), էլ «չեն մանուկ» (իբր չգիտեն-ի, չեն իմանում-ի համարժեք), էլ «աշխարհի չորս ծակերը» (ծագրերի փոխարեն):

Լավ, խորհում էիր, ժամանակի հետ դեպի լավը կգնա, այսպես հո չի՞ մնա... Բայց, ավալ, տխուր ու կամխորոշված հիվանդության նման, սխալները, վերանալու կամ գոնե քշանալու փոխարեն դեռ... շատանում են այլազան (մետաստազներ չասելու համար) բարդացումներով: Այստեղ են ասում, թե օրի կաթիլն անգամ ժայռը կծակի, եթե մշտապես... Այնինչ կաթիլ չէ, այլ ողջ մի ջրվեժ...

Սկսեցք նախ դասագրքային, պարզ ու բարի ճշմարտություններին, ինչպես սովորեցնում ենք մեր մանուկներին. այսպես զըրվում է, մինչ այնպես արտասանվում: Այլ լեզուներն էլ ունեն իրենց զինանոցը, ասենք, ֆրանսերենը, ուր գրությունն ու արտասանությունն ավելի բան տարբեր են: Անգլերենն էլ, մասամբ: Մեր թանկ ու անուշ հայերենը նման անհրաժեշտ «նեղություն» էլ չի տալիս մեզ, պարզապես գրում ենք «արջ», կարդում «արչ», գրում ենք «թագավոր», կարդում՝ «թաքավոր», համապատասխանաբար՝ ջ-չ-ի, գ-ք-ի կանոնների համաձայն և այլն... «Վարդան» կամ «Վարդուհի» անունները կրողներին կոչում ենք ոչ թե «Վարդան», «Վարդուհի» (ինչպես գրվում է), այլ՝ Վարթան, Վարթուհի: Մտածում են՝ այն երբևէնից «համերգ» բառը «համերգ» արտասանական համարժեքի փոխարեն «համերգ» գրածով էլ սկսեց արտաբերվել: Ճշմարտության դեմ չմեղանչելու համար ասենք, որ հիշյալ «համերգ» բառը (շատ էլ օգտագործվող բառ է) իր աղավաղված ձևով դեռ խորհրդային ժամանակներից է ասպարեզում: Իսկ այսօր՝ որքա՞ն ասեք, իր օրինական, բնական ձևով չես լսի, չնայած մեր ռադիոյի ծրագրերն օրն ի բուն շնչում են համերգներով: Միշտ ու ընդհանրապես՝ համերգ, հա համերգ, մինչդեռ ճիշտ կլիներ արտաբերել համերք: Ի դեպ, էլի՞ ճշմարտությանը արժանին հատուցելու համար ասենք, որ «համերգ» բառը ոչ գրագետ ձևով օգտագործողներն ընդհանուր առմամբ բանիմաց, կիրթ, հաղորդավարական որոշակի կուլտուրա ունեցող մարդիկ են (անուններ չեն ուզում տալ): Ախր, սիրելիներս, այդպես չի՞ կարելի: Երևի այս բառը սխալ արտաբերողներից մեկին թվացել է, որ այդպես իր շուրթերից իբր ավելի զեղեցիկ է հնչում: Եթե այդպես լինի էլ, դուք դրա իրավունքը չունեք, և ոչ միայն, այլև պատասխանատվության ենթակա արարք եք թույլ տալիս, քանի որ դուք էլ խոսքի ոլորտի զինվորներ եք, պարտավոր եք պաշտպանել այն: Գիշտն ասած մի, ոչ այնքան հեռու անցյալի փաստ մտաբերեցի. երբ այս կամ այն առիթով հնչական (առհասարակ ուղղախոսական) հարց վիճարկելիս ռադիո էինք զանգահարում՝ ճշտելու:

Երբ սխալվողը օտարալեզու կրթություն ստացած (ռուսահայ կամ սփյուռքահայ) պետական կամ քաղաքական գործիչ է, հասկանալի ներողանտություն ենք հանդես բերում, քանի որ, իրենց անկախ, ճակատագրական հանգամանքներն են կամխորոշել հայերենի նրա թերի իմացությունը: Կամ, երբ այս կամ այն բիզնեսմենը կամ ձեռնարկատերը, եթե մանավանդ գործում է ի շահ և ի բարօրություն մեր երկրի, անթերի հայերենով չի խոսում, ցանկալի կամ հաճելի չէ, իհարկե, բայց մտահոգիչ էլ չէ: Նույն ներողանտությունը հանդես բերել ռադիոյի և հեռուստատեսության հաղորդավարների նկատմամբ ոչ միայն ներելի չէ, այլև դատապարտելի է: Տեսնվա՞ծ բան է, որ, ասենք, Ամերիկայի Միացյալ Նահանգներում կամ Ֆրանսիայում անգլերեն կամ ֆրանսերեն լիարժեքորեն չիմացողը աշխատի այդ դաշտում: Պատկերացնո՞ւմ եք, եթե նույն թերացումը իր մասնագիտության կտրվածքով ի հայտ բերի վիրաբույժը կամ օդաչուն՝ սավառնելիս, երաժիշտը՝ բեմում... Ես խոսում եմ մեր պետական ազգային հաստատությունների մասին, սակայն պատասխանատվության իրենց բաժինն են կրում նաև, անպայմանորեն, մասնավոր հեռուստա- և ռադիոկայանները, մեր անկախության նորօրյա միա-

վորները: Երբ լսում ես «Արծազանք» ռադիոկայանի ազդական-չը՝ «Արծազանքը դա այն է...», բնականաբար նկատում ես, որ ռուսաբանություն է, ընդհանրացված իմաստով՝ օտարաբանություն: Գրագետ հայը կասի՝ «Արծազանքն այն է...»:

... Շա՛տ տարածված սխալ է բառամիջուկ տ բաղաձայնի ձևախեղումը, ինչպես Արարատյան-Արարածյան (տե՛ր Աստված...), առավոտյան-առավոժյան, արևմտյան-արևմժյան, Հայրապետյան-Հայրապեժյան, ճշմարիտյան-ճշմարիժյան և այլն...

«Որևէ» բառը մեզանում հոգնակիակերտ իմաստ ունի, երբ ասում ենք՝ որևէ մեկը, ասենք, թռչնային գրիպով հիվանդի հետ շփվելու իրավունք չունի, հասկանում ենք, որ ոչ մեկը իրավունք չունի (այսինքն՝ բոլորն էլ իրավունք չունեն...): Հաճախ կլսես. «... որևէ շփումներ, որևէ հարաբերություններ...» սխալ ձևերը, երբ հոգնակիակերտ «-ներ» մասնիկներն ավելորդ են, քանի որ «որևէ» բառի մեջ հոգնակիի գաղափարն արդեն կա:

Ես, որ ինձ նման շատերի հետ միասին բախտ են ունեցել Երևանի պետական համալսարանում աշակերտելու հիրավի անթագակիր ակադեմիկոս հանգուցյալ Ռաֆայել Իշխանյանին, այսօրվա պես հիշում եմ. «Չեր խոսքաշխարհից հանքե այդ ավելորդ «-ցրեցի»-ները՝ «հարցրեցի, բարձրացրեցի, լցրեցի», քանի որ համապատասխան բայաձևը կազմվում է անորոշ դերբայի վրա հավելելով «-եցի» մասնիկը: Մինչդեռ այսօր ռադիոն (մանավանդ հեռուստատեսությունը) լցված են այդ ավելորդ, անհարկի «-ցրեցի»-ներով:

«Խոսքը գնում է...»

Այսօր, ցավոք, շատերի բերանից կլսես (մասնավորաբար՝ Ազգային ժողովում). «Խոսքը գնում է այն մասին, որ...»: Հայերենի գրագիտության զինանոցին քաջատեղյակ հայր փոխարենը կասի՝ «Խոսքն այն մասին է, որ...»: Տիպիկ օտարաբանություն «խոսքը գնում է» ոչ հայկական արտահայտչաձևը կոնկրետ դեպքում ռուսաբանություն (речь идет) է:

«Ամենասկզբում...-ամենավերջում...»

Սկիզբն սկիզբ է, վերջը՝ վերջ: Վերջերս մեր խոսքում հայտնված կեղծ, մանավանդ՝ բացահայտ օտարաբանություն, ճշգրիտ՝ ռուսաբանություն բուրդով սխալ այս ձևը հաճախ կլսես ռադիոյի և հեռուստատեսության հաղորդաժամերին: Մեր մտածելակերպի տեսանկյունից պարզապես անհեթեթություն է. եթե կա «ամենասկիզբ», ուրեմն պիտի լինի և «միջին» սկիզբ, ապա և «վերջին» սկիզբ... Ռուսերեն под самым концом արտահայտությունն է, որ արհեստականորեն սպրդել է հայերեն խոսքի մեջ և... գնացել... Տեսեք, թե ի՞նչ եռահարկ կրկնաբանություն է (տավտոլոգիա): Գրագետ հայը կասի՝ «Սկսենք...» և ոչ թե՝ «Սկսենք ամենասկզբից»:

«Սիրով զբաղվել...»

Մեծն Կոմիտասի նույնիմաստ ձևակերպման հետ համաձայնելով՝ մեկ այլ մեծություն՝ ակադեմիկոս Յ. Աճառյանն ասում էր. «Եթե ուզում ես ճշտել որևէ բառաձևի իսկությունը, նրա իրական հիմքը, գնա ժողովրդի մոտ, ամենաճիշտ ձևը նրանից կլսես»:

Ահա, դարեդար հայ ժողովուրդն ասում է՝ սեր անել, սիրել, նաև՝ իր հոգու արտացոլանքը կրող երգերի մեջ («Խնձորի ծառի տակին ես իմ յարին սիրեցի...»): Խոսքն այստեղ սիրո առարկայական կողմի մասին է, ոչ ընդհանրապես զգացմունքի՝ Ես նրան սիրում եմ:

... Հովազի՞ նման մեզ վրա բաց թողնվող հեռուստատեսիվներում աջ ու առաջ կլսես «սիրով զբաղվել» օտարածին, հայերենի վրա կարկատանված արտահայտությունը: Այո, խոսքը հենց սիրո առարկայական կողմի մասին է: Եթե հայտնի լեզվաբան Հունբուլդոն իրավացիորեն հայտարարում էր, թե «Լեզուն լեզվամտածողություն է», ապա մեր Հովի. Թունմայանն էլ ամենայն իրավամբ հավաստում էր, որ «Բառը մի աշխարհք է»: «Սիրով զբաղվել» բառակապակցությունը սեքսով զբաղվելու համարժեքն է և ոչ թե սերը: Սեռական ակտ կատարելը հենց զբաղում էլ

է, այլ բան չէ: Սեր չէ, հոգու և մարմնի լիարժեք մերժեցումն ու այրումը չէ: Դրա համար էլ այդ՝ այս դեպքում իրոք զբաղումը ապրուստի միջոց դարձրած սեքսի արհեստավորները հենց սեքսով էլ զբաղվում են և ոչ թե սիրում են:

Ամենդ հայ ժողովուրդը: Դարերի հողվույթում, նաև՝ այսօր, իրապես սիրո ծարավի հայ պանդուխտը, որ իր յարոջ ճերմակ ծոցին էր կարոտում օտար եզերքում (տես՝ մեր հայրենները), այսօր ի դեմս հեռուստադիտող հայի հմտանում է «սիրո զբաղումի մեջ...»: Հայրենակիցներ, իրապես սիրե՛՛նք ու սեր անե՛՛նք, այլ ոչ թե զբաղվե՛՛նք սիրով:

Չարչակող բառեր...

Բառ ասածդ էլ պիտի բախտ ունենա: Բառեր կան, որ առք-փառք անցնում են իրենց ուղին, իրենց օգտակարության և անհրաժեշտ գործածության թագնուպասկը գլխներին: Բառեր էլ կան, որ («դժբախտ» բառեր, մի տեսակ՝ «որբի գլուխ» դարձած բառեր), որ խոշտանգվում են հարկին և անհարկի... Այսպիսիներից է «համբույր» բառը: «Համ» և «բույր» արմատներից է, հասկանալի է, սիրո հեք ու թրթռով լեցուն: Հասկանալի էրգարվեստի բնագավառի նորեկ «աստղերից» ոմանց բառապաշարում այն, որքան էլ ցավալի է, հանդիպում է «համբույր» սխալ, իսկ մտքի տեսակետից ուղղակի անընկալելի՝ ձևով, որովհետև «բույր» նշանակում է 10000 (գրաբարյան), կարող է լինել գինվոր, միավոր, բայց «համ»-ի հետ կապ չունի:

«Դժբախտ» բառ է «խանգարել» անմեղ բայը, որ խոշտանգվում է «խանգառել» ձևով արտաբերվելով: Բախտավոր չէ և «թատերական» ածականը. այն գրեթե միշտ գործածվում է «թաթերական» գավեշտական խեղումով: Ուզում ես ասել, որ այս բառի հիմքում «թատրոն» բառն է, ախր, ոչ թե «թաթ»-ը: «Դաստիարակել» բայածնն էլ երջանիկներից չէ, նրա ձևախեղումն էլ երևան է գալիս «դաստիարակել» ձևով (հեռուստատեսությամբ և ռադիո-

յով): «Համալսարան» բառը հազվադեպ կլսես անհրաժեշտ արտասանությամբ. մեծ մասամբ ներկայացվում է, ոչ ավելի, ոչ պակաս, «համասարան» ձևով (հիշենք, որ իրականում «համա» (ընդհանուր) և «լսարան» գուգորդությունն է: Այսպես: Իսկ օրերը, երբ ազգային ռադիոհաղորդումներից մեկի հաղորդավարն ասաց «Բարի առավոտ» (դարձյալ օտարաբանություն) և ոչ թե մեր տաք ու հոգեմոտ «Բարի լույսը», արդեն լրջորեն մտածեցի, թե, իրոք, մի ժամանակ ռադիո-հեռուստատեսային, այլև գրա-հրատարակչական ոլորտում ընդունված ոճաբանի հաստիքն արժե վերականգնել: Ոճաբանի բանն ու գործը կլինի բոլոր հաղորդումները (տեքստերը, տեսագրություններն ու ձայնագրությունները) աչքի անցկացնելը նախապես: Դրա կարիքը կա: Որպեսզի եզովպուր չդառնա եզովպուս:

«Հրավերք»-ի մասին վերջապես, բազմաչարք բառեր շարքից: Ո՛վ չգիտի, որ «հրավերք» նշանակում է «ճաշկերույթ, կերուխում, հացկերույթ, խրախճանք, քեֆ», իսկ «հրավեր», որ հրավերքի հրավեր էլ կարող է լինել, ընդամենը կանչ, հրավեր, հրավիրելու գործողությունն է: Անկախությունից ի վեր, ճակատագրի հեզմանքով այս «հրավերք» բառը ամենից շատ է շրջանառվում, այն էլ մեծամասնության՝ արտարկանի՝ կյանքով գոյատևելու գունագեղ փաստի կողքին: Ուղիղն ու հեռուստատեսությունը հեղեղված են «հրավերքներով» ... Հրավիրել են, ասենք, այսինչ նախարարին հարցազրույցի: Նախարար դու նախարար, ոչ ավելի, ոչ պակաս, շնորհակալություն է հայտնում «հրավերք»-ի համար... Երբեմն հարցազրույցը վարողի իմացությունը հերիքում է, որպեսզի իր ուժերով ջանա շտկել դրությունը: Կրկնում է, թե ուրախ է, որ հարցազրույցի հրավերն ընդունել է ասինչը: Լախտի նման դարձյալ ականջիդ հարվածում է հյուրի պատասխանը, թե, ասենք, ինքն էլ է ուրախ կամ գոհ, այդ հրավերքի համար:

... Որ մի մե՛ծ, համընդհանուր, համայնական հրավերքի կարիք կա՝ քարից հաց քամող հայ ժողովրդի համար, ճշմարիտ է: Հրավերքի՝ հրավեր...

Անահիտ ՊՐՍՍՍՅԱՆ

Լեռ ԿԱՍՏԱՐ

ԱՆՏԻՊ ԷՋԵՐ

Կարելի է ապրել երկու կերպ, համառոտ և ընդարձակ:

Ընդարձակ կամ մանրամասն ապրողը պիտի անի այն բոլորը, ինչ անում են բոլոր մարդիկ, կամ մարդ արարածն առհասարակ:

Նա պիտի ծնրադրի բոլոր աստվածներին հերթով, դավանի բոլոր կրոնները, պատկանի աշխարհում եղած բոլոր քաղաքական կուսակցություններին, ժխտի այդ բոլորը ու հանդես գա չեզոք, ժխտի բոլոր աստվածներին և դառնա անաստված, ճաշակի այն բոլոր կերակուրները ինչ կերել է մարդը երբևիցե, ման գա աշխարհը առանց որևէ ծակ ու ծուկ գանց առնելու, խելագարվի, կոմունիզմին հավատա և այլն:

Նայեցեք ջրաղացին: Ջրաղաց կա, ցորենը փոշիացնում է, կա, որ ձավար է դարձնում, մեջտեղից երկու կես է անում, և վերջապես կոլխոզային ջրաղացների նման երկու ամբողջական ցորենները իրար է կպցնում:

Իսկական մարդը մարսված կերակուր, ջրաղացի փոշի պիտի լինի: Այս տեսանկյունով եթե նայենք մարդուն, ես մարդ համարվել չեմ կարող:

Այնքան համառոտ են ապրել: Անհաղորդ կյանքի մանրամասներին, ես ծնած օրից իմ գրիչ մանին են նայել և կյանքի բոլոր արժեքները այդ «բանկն» են տարել ոչնչով փոխարինելու: Մարդիկ ըստ սովորականի ապրելուց հետո են մեռնում, իսկ ես նախ մեռա, հետո ապրեցի:

Նրանք, ովքեր ինձ նման ապրում են մեռած, նրանց համար չկան կաշկանդիչ սովորություններ, ծեսեր, նախապաշարմունք, բարոյականություն, ամոթ, պատկառանք և նման բաներ: Որովհետև այդ բոլորը մահվան հետ համեմատած այնքան անմշան չարիքներ են, որոնց լինելուն էլ, չլինելուն էլ պետք է նայել անտարբեր: Դրանք փոքրիկ ոչնչություններ են, որոնք իրենց ճանապարհին միանում են իրար հետ ու գնում թափվում մեծ ոչնչության մեջ:

Մի ժամանակ, երբ ես կարդում էի Իսահակյանի «Աբու-Լալա Մահարին» չէի հավատում նրա ճշմարտությանը. ասում էի՝ երկի հեղինակը գրել է իր գայրացած ռուպեներին ու բարկությունն անցնելիս կակի սիրել աշխարհը:

Այսօր սակայն, սարսափով նկատում եմ, որ ես էլ իսկական Աբու-Լալա Մահարի եմ: Նույն անել վիճակին մատնված:

Ես էլ այդ արաբ բանաստեղծի պես եղա ուրիշ երկրներ, իմաստունների ու հիմարների հետ սեղան նստա, աշխարհը նոր եկողներին, աշխարհից մեկնողներին բարև տվի, բարև առա, ու եկա այն եզրակետից, որ իսկապես պետք է քարավանը դուրս քաշել «Բաղդադից» ու չվել այս աշխարհից...

Կեցությունը բնորոշում է գիտակցությունը: Ընդունենք այս ու ես ձեզ բացատրեմ, թե ի՞նչ կեցություն եմ ունեցել և որպիսի՞ գիտակցություն ունեմ այժմ:

Աշխարհ գալով, առաջին մարդն, որ դեմս ելավ, մեծ եղբայրս էր: Հարցնում եմ.

- Եղբայր ջան, աշխարհի ճամփեն ո՞ր մեկն է: Խոժոռ նայում է ինձ իմ եղբայրը: Այնքան խոժոռ, որ աշխարհ գալս գղջացի:

Երբ փորձեցի խոսել հետը, մի քանի անհրաժեշտ տեղեկություններ ձեռք բերել, վերջապես աշխարհի արտաքնոցի տեղն իմանալ, որովհետև դե, ես այն ժամանակ փոքր էի՝ մեկ էլ մի սոսկալի ապտակ եկավ երեսիս: Առանց հանցանքի, առանց մեղքի, ոնց որ ասես ներկայիս կոմունիստը լիներ, որի մասին այն ժամանակի հասկացողությունն չունեի:

Այստեղ ես կանգ առի և մի փոքրիկ աշխարհայացք կազմեցի՝ որ էր. «աշխարհը դաժանություն է ու ապտակ»:

Ընտանեկան այս «դաստիարակությունը» առած երբ դուրս ելա փողոց՝ թուրք լամուկները դանակները քաշած հարձակվեցին վրաս ու ես փախա:

Բայց արդի աշխարհայացքս ու վրան ավելացրի... դանակներ և փախ ու կրտորած:

Յետագայում հայրս Պարսկաստան փախավ, ես՝ էջմիածին եկա սովորելու:

Ի՞նչ պիտի սովորեի, հարազատներից պոկված մի խեղճ, պանդուխտ երեխա: Չորս և չորս... ա՛խ մայրիկ ջան... անում է ութ: Ութից հանած չորս, թեև ճիշտ է, անում է դարձյալ չորս՝ բայց ինչի՞ս է պետք այդ չորսը, երբ իմ ծեր հայրը պանդխտության մեջ պիտի տառապի: Այս վշտերիս մեջ ինքս ինձ մոռացած, չորս տարի հետո ո՞ր սատանի ծոցից դուրս թռավ Սաթենիկ անունով մի աղջիկ և եկավ մտավ սիրտս: Դե արի հիմա էլ նրա սիրուց տոչորվիր:

Ուսումնա ավարտելուց հետո էլ ես չխնդրեցի այդ երկար աղջկա ձեռքը, որովհետև եթե ընդունեիր առաջարկս, հանկարծ երջանկությունս այնքան մեծ պիտի լիներ, որ ես տակին ճխվեի:

Սրտիս կեսը էջմիածին թողած վա՛ն գնացի:

Այստեղ էլ ես ամուսնացա ոչ այնպես, ինչպես ճաշարան մտնողը իր ճաշակին համեմատ կերակուր է պատվիրում: Ոչ, ես նստա սեղանին և ասացի՝ «պատրաստի» ինչ ունես՝ բեր: Որովհետև ոչ մի ճաշարանապետ չէր կարողանա իմ ուզած Սաթենիկը պատրաստել: Իսկ երբ Սաթենիկ չկա՝ ոչինչ չկա...

Երբ եկավ 1915 թվականը, պատահեց հայոց պատմության մեջ չպատահած դեպք:

Թուրք կառավարությունը, որ սովորություն ուներ տաս տարին մեկ քաղհանել հայությունը, սեյրակացնել՝, այս անգամ տրակտորը լծեց ու ողջ Տաճկաստանը հերկեց այնպես, որ հայի հոտը կտրվի այդ երկրից ու մենք գաղթեցինք:

«Գաղթը» անձամբ ճաշակողի համար հասարակ անուն է և գրվում է փոքրատառով, իսկ անձամբ ճաշակողի համար դա հատուկ անուն է և աշխարհում միակը:

Այն ժամանակ, երբ մի թեթև բեռ շալակո առած, ծերունի մորդ ձեռները բռնած դուրս ես գալիս քո հայրենի տնից և մի վերջին անգամ ետ ես նայում կտրելու համար այն անթիվ, անըմբռնելի թելերը, որ քեզ կապում են քո հայրենի տանը, քո պապերին, պապի պապերին, այն ամբողջ քաղցր հուշերին, որոնցով պարուն էիր մինչև այդ վայրկյանը: Դու, երբ մի խորունկ ա՛խ ես քաշում, ու երես դարձնում այդ բոլորից՝ այդ ժամանակ ես զգում միայն, թե ինչ բան է գաղթը...

Լավ ու վատ՝ ճաշակեցինք մեր առաջ դրված այս պատառն էլ, վերջապես եկանք Կովկաս: Բայց այստեղ էլ հայի արյան հոտն առած թուրքը չուզեց հանգիստ տալ հրաշքով ճողոպրած իր զոհերին և իր ոտը Բարդոյան լեռնաշղթայից այս կողմը պարզեց և շարունակեց արյունառությունը, մինչև բոլշևիկները Յայաստան մտան և մնացած հայությունը, «ազատեցին» թուրքի ճանկերից:

Մեզ պարզևած ազատության մասին մի պարզ գաղափար տալու համար ասեմ, որ հետագայում երբ 21 թվականին հայերը ապստամբեցին իրենց «ազատարարների» դեմ, պարտված հայությունը նորից թուրքիա էր փախչում, տաճկական սուրը գերադասելով բոլշևիկների կացնից:

Բոլշևիկյան Յայաստանը մի կատարյալ սառցաստան էր, որտեղ հայության ուղեղը սառեց իր գանգում բնավ չմտածելու համար, արյունը սառեց բազուկներում բնավ չաշխատելու համար:

Չեզ են հարցնում.

- Ի՞նչ «գիտակցություն» կարող եմ ունենալ ես հիմա, այսպիսի «կեցություն» ունենալուց հետո:

Ես կարո՞ղ եմ այս անլուր աղետները գլխիս բերած ՍԱՐԴՈՒՆ «կենդանիների թագավոր» անվանել:

Ուրեմն այսպես.

Տաճկաստանում ես ապրում էի անմեղ, անմեղ: Բայց տաճիկ կառավարությունը սրով ետև ընկած ուզում էր ինձ սպանել: Փախա իմ ռուսահայ եղբայրների մոտ, մի քանի տարի ապաստան գտա, հետո էլ այդ «եղբայրները» բռնեցին ու քսան տարով աքսորեցին հյուսիսի սառնամանիքները:

Իմ աքսորի առաջին գիշերը կինս ինձ դավաճանեց:

Իմ գրկի մեջ մեծացած որդիս մեծանալով՝ ոխերիմ թշնամի դարձավ ինձ: Իմ անեմամերձավորագույնը մոտեցավ ինձ ծեծելու համար:

Խմբագիրները ասում են նյութ բեր, մեկի տեղը տանում եմ տասնմեկը՝ ոչ մեկն էլ չեն տպագրում:

Տունս ցախանոց է, ութը տարի է պետությունից բնակարան եմ

ուզում չի տալիս:

Եթե արաբ բանաստեղծը իմ օրին լիներ, հիմա վաղուց էր փախել անապատ:

Բայց ես, ճիշտն ասած, չեմ ուզում փախչել անապատ, որովհետև այս րոպեիս ես ապրում եմ սովետական անապատում:

Յետո անապատ գնալը միտք չունի, փոխանակ ինձ հանձնելու անապատի իժերին, վայրի գազաններից, այստեղ, իմ շրջապատը հազր լիքն են իժերով ու գազաններով, թող նրանք ինձ ուտեն, ի՞նչ կարիք կա տեղից շարժվելու:

Դժվարությունն այնտեղ է սկսվում, երբ աշխարհ է գալիս մի մարդ, աշխատում է հագնել աշխարհային օրենքները և չի կարողանում: Նրանք ստանդարտ են, իսկ մարդը՝ կոշտուկներով լիքը:

Ի՞նչ անել: Կարո՞ղ ենք պահանջել, որ նա նախապես գուշակելով, թե ծնվելու է այդպիսի մարդ, իր օրենքները հարմարեցնել դեռ չծնված մարդուն:

Չէր կարող:

Նա ասում է՝ աշխարհն այս է, ուզում ես ապրիր, չես ուզում՝ քեզ համար «պրոտեզարանում» հատուկ աշխարհ չինել տուր:

Աշխարհ գալիս ես դեռ չէի տեղավորվել, երբ ինձ ասացին՝ թե դու մեռնելու ես...

Դե արի ու մի թքի այս տեսակ աշխարհի վրա:

Այո, ասացին պիտի մեռնես, բայց չասացին թե երբ: Այնպես որ ամեն քայլափոխին, երբ մի դժվարության էի հանդիպում, կարծում էի իմ մահվան ժամը հասել է:

Իմ կյանքի ամենադժվար մասը բոլշևիկյան տիրապետության շրջանն էր: Ինձ ասում էին՝ «Դու որ բոլշևիկների տիրապետության տակ կարողացար ապրել քառասուն տարի, մի վախենա, էլ չես մեռնի»...

Բայց դժբախտությունը միայն բոլշևիզմը չէր: Դրանք բազմաթիվ էին: Այս բոլորին հանդուրժել չկարողանալով, ցավից հանեցի աշխարհն «ոտքիցս» դեռ շարտեցի, ձեռք զարկելով հատուկ ինձ համար աշխարհ կառուցելու...երևակայությանս մեջ:

«Իմ ծնունդից մինչև մահը կապված է մի լար, երևակայությունս լարախաղացի նման անվերջ գնում-գալիս է այդ լարի վրա:

Ասում են ամենաարագ հաղորդակցության միջոցը ինքնաթիռն է հիմա, բայց սխալ է: Ինքնաթիռը չի կարող մարդու նման ծննդյան ու մահվան միջև ընկած ճանապարհը կտրել մի ակնթարթում, այդ ճանապարհը կտրում է երևակայությունը:

Իմ երևակայությունը այն թագբեհի թելն է, որ կապում է իմ կյանքի բոլոր երեկները իմ կյանքի վաղերին:

Չլիներ երևակայությունս՝ իմ երեկներն ու վաղերը կանցնեին իբրև անծանոթներ առանց իրար բարևելու:

Ես յոթանասուն տարեկան եմ, ամեն անգամ, երբ երևակայությունս երթևեկում է այդ տարածությունը՝ քառասուն տարվա վրայից ցատկում է: Այդ իմ չապրած տարիներն են: Այդ տարիներին բոլշևիկյան իշխանությունը եկավ, քացու մի հարվածով դուրս վճռեց ինձ դեկավարող կամքս, մի էլի նոխտա՞ դրեց վզիս, տարավ կապեց սոցիալիզմի դատարկ մտրին, և ես սա 40 տարի միայն ազատություն եմ զուռն:

Բայց մի ժամանակ ես մարդ էի... Այդ նույն բոլշևիկյան կառավարությունը ամբողջ 20 տարի նոխտայիցս բռնած ման ածեց իր բանտերում ու աքսորավայրերում: Երբ ուժասպառ եղա՝ բերեց կապեց ախոռը՝ մեռնելու:

Չի եմ ասում, որ 70 տարվանից քառասունի վրայից ցատկ կատարի:

Այդ ցատկը իմ երևակայությունը կատարեց:

Ու հիմա, երբ մեռնում եմ, չգիտեմ ո՞ր ձողին, ո՞ր ծառին, ո՞ր օղին կապեմ հեզ ձիուս սանձը, որ իմ մահվանից հետո էլ գնա-գա կյանքիս լարի վրա:

Պատերազմներում, երբ ընկնում է գինվորը, նրա ձին երկար չի հեռանում իր տիրոջ դիակից, կանգնում ու պաշտպանում է նրան գազաններից ու գիշակեր թռչուններից: Պատահել է ձի, որ մինչև վերջ էլ չի հեռացել իր տիրոջ դիակից:

Իմ ձի, աղաչում եմ քեզ, կանգնիր ու պաշտպանիր ինձ բոլշևիզմից: Նրանք պղծեցին իմ կյանքը, զեթ թողնեն որ մաքուր մեռնեմ:

Չթողին որպես մարդ ապրել, զեթ թույլ տան մարդ մեռնել...»

* Թուրքերեն՝ նոսրացնել, թեթևացնել:

** Թուրքերեն՝ պիտակ, դրոշմ

ՓԱՌԱՊԱՆԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Ապրիլի 1-ին կառավարությունը վերջապես ժողովրդի սուտ խոսելու պահանջի մասին էլ է հոգում:

Տարվա 364 օրը ինքն է ստախոսում, մի օր գեթ թողնում է ժողովրդին ստելու...

Կնոջ մասին մի գրող շատ ճիշտ բան է ասել: Ասում է՝ կինը նման է Պիգալի աշտարակին, ծովում է դեպի քեզ, բայց հեշտությամբ չի փուլ գալիս վրադ:

Բայց ճիշտ է նաև այն, որ եթե մի անգամ փուլ եկավ վրադ, էլ հավիտյանս դուրս չես գա տակիցը՝ կյանքդ կխորտակվի:

Կինը կրակ է: Քանի չես առել, մրսում ես, առնելուց հետո էլ այրվում ես: Մարդը, որ մինչև օրս կանգուն է մնացել, այդ նրանից է, որ կինը նահապետական զենքով է կռվում մարդու դեմ. երբ ատոմային զենք ձեռք ձգի՝ Մնաս բարով մարդկություն...

Ամուսնությունը ներկայումս շատ, շատ է հեշտացել: Առաջները մարդ ու կին միանում էին ձեռքերով. հիմա՝ պետլի է, երբ ուզենան կանջատվեն:

Առաջները կինը, լինելով անաշխատ, մեծ ծանրություն էր մարդու ուսին: Հիմա կին կա, որ մարդուց ավելի է փող ստանում և այնքան թեթև է, որ հաճախ մարդը, տարիներով զնալով, նոր, հանկարծ է ինանում, որ իր ուսերին... կին չկա:

Ես, որ փիլիսոփա եմ, այդ ոչ թե շատ խելք ունենալուցս է, այլ կյանքում լիաթոք չապրելուց:

Եթե աջ կողմից ինձ մի կին քաշեր, ծախ կողմից մյուսը, և ես միջոց չունենայի նրանց հասնելու, ի՞նչ գործս էր աշխարհի մասին մտածել և մարդկանց գործին միջամտել:

Կորչի աշխարհն էլ, մարդն էլ: Ինձ կին է հարկավոր:

Կռիվն իր տեղը, բայց ես ու կինս արդեն ծերացել ենք և շատ հաճախ նստում ենք ու իրար հետ այսպիսի զրույցներ ունենում:

- Կնիկ, - ասում եմ, - վաղ մյուս օր կնեռնեց ու թաղման ծախս չունեց:

- Դու գրող մարդ ես, քեզ պետությունը իր ծախսովը փառավոր կթաղի:

- Եթե իմանամ, որ պետությունը ինձ պիտի թաղի, այն էլ փառավոր, ես այլևս չեմ մեռնի: Մեր եղած չեղածը հավաքենք, դու մեռիր, մինչև տեսնեմ ես ի՞նչ պիտի անեմ:

- Ինչո՞ւ, քա:

- Ա՛յ կնիկ, գիժ խոսք չե՛ս: Ես իմ ողջ կյանքում աշխատել եմ այնպիսի դիրք բռնել, որ կառավարությունը իմ անունը չտա, հիմա թույլ տամ, որ մեռնելուցս հետո ինձ մեծարի՞:

Ի՞նչ կասի ժողովուրդն իմ մասին: Չի՞ ասի՝ այս մարդը իր կենդանությանը պայքարեց կոմունիզմի դեմ, մեռնելուց հետո զիջեց և ընդունեց նրա մեծարանքը:

- Մեռնելուց հետո ինչ կուզեն ասեն: Մահվանիցդ հետո դու կարող ես մինչև անգամ մտնել կոմունիստական կուսակցության շարքը:

- Ա՛յ կնիկ, հերիք է հիմար բան խոսես. մեռնողը զերեզմանը թողած նրանց շա՛րքը կմտնի...



Երբ բռնությունը դռնով ներս մտնի, սերը պատուհանից դուրս կփախչի:

Մեզանում սովորություն է դարձել կին առնելը ծներուկ առնելու նմանեցնել:

Ճիշտ է որոշ նմանություններ կան, բայց տարբերությունն ավելի մեծ է:

Ծներուկ առնելիս կարող ես կտրել տալ նոր վերցնել. իսկ կնոջը չես կարող կտրելով առնել. պիտի ամբողջ վիճակում տուն բերես՝ հետո կտրես: Քո բախտը. կարող է կարմիր դուրս գալ, կարող է «դրուն»: Երբ ծներուկը «դրուն» է դուրս գալիս՝ կարող ես ածել անասունների մտուրը ու հանգստանալ, իսկ «դրուն» կինը մինչև կյանքիդ վերջը պիտի ուտես, չիմանալով ինչ բան է ծներուկը:

Ամուսնությունը վիճակախաղ անգամ չէ. վիճակախաղի ամենամեծ դժբախտությունը այն է՝ որ քաշածդ տոմսը կարող է փուչ դուրս գալ, իսկ ամուսնական վիճակախաղում փուչ տոմս գոյություն չունի. նրա բոլոր տոմսերն էլ շահում են կամ երջանկություն, կամ դժբախտություն:

Ես ամուսնության մասին հետևյալ կարծիքն ունեմ. եթե հատուկ քեզ համար մի ծնողի պատվեր չես տալիս կին ծնելու՝ նախապես ծնված պատրաստի կինը երբեք վրադ չի ստտելու:

Ես կարծում եմ, որ բոլորովին կարիք չկա, որ մարդ անպայման աշխարհայացք ունենա: Եթե այդ անհրաժեշտ լինել՝ Աստված, այն ժամանակ, երբ Ադամի կողքի ոսկրից կին էր դուրս հանում նրա համար, մյուս կողմից էլ մի աշխարհայացք կհաներ Ադամին՝ դավանելու համար:

Երբեք, ոչ մի դարում կինն այսպես ստրուկ չի եղել, ինչպես հիմա: Կինը մարդու հետ հավասար քար է քաշում դրսում, երեկոյան տուն դառնալիս, երբ մարդը պառկում է հանգստանալու, կինը սկսում է իր երկրորդ հերթի աշխատանքը, մաքրում, կարգի է բերում տունը, կերակուր է պատրաստում, լվացք, թափ և այլն և այլ անվերջ աշխատանքներ՝ մինչև քնելու ժամանակը:

Պառկելիս, դեռ իր ջարդված մարմինը չհանգստացրած՝ մեկ էլ մարդը այն կողմից

ծայնեց.

- Արուսյակ կամ Աստղիկ, եկ քեզ սիրեմ...

